ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ

ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

2020 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ԻՑ ՀԵՏՈ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՎԱՆԱՁՈՐ

2021

Տեղեկանքը կազմեցին՝ Նազելի Մովսեսյան

Արմինե Սաղիկյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո՝ 2020 թ. նոյեմբերի 18-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հրապարակեց[1] ճանապարհային քարտեզ՝ ներկայացնելով հետպատերազմյան վերականգման վերաբերյալ առաջնահերթ գործողությունների ցանկը:

Ճանապարհային քարտեզի նպատակն էր պատերազմի հետևանքով առաջացած, նաև բացահայտված համակարգային խնդրիների լուծումը՝ այդ թվում զինված ուժերի բարեփոխումների և զարգացման իրականացումը:

2021 թ. մարտի 16-ին ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստում պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանը հայտնեց, որ մեկնարկել է զինված ուժերի բարեփոխումների ծրագիրը և որ ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ ստեղծվել է բարեփոխումներ իրականացնող հանձնաժողով, որը ղեկավարելու է պաշտպանության նախարարը:

Ըստ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Սարգսյանի՝ մինչ այդ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով արդեն իսկ ստեղծվել էր նմանատիպ կառույց, որը թե՛ կառուցվածքի, թե՛ բացթողումների վերաբերյալ ուսումնասիրություններ և վերլուծություններ է անում: Միաժամանակ պաշտպանության նախարարի տեղակալը հայտնեց, որ որոշ չափով փոփոխության պետք է ենթարկվի նաև պաշտպանության նախարարության կառուցվածքը[2]:

2021 թ. հունիսին կայացած և ԱԺ արտահերթ ընտրություններից հետո՝ 2021 թ. օգոստոսի 18-ին ՀՀ Կառավարության կողմից հավանության արժանացած և ԱԺ

[1] https://www.civilnet.am/news/471207/%D5%B6%D5%AB%D5%AF%D5%B8%D5%AC-%D6%83%D5%A1%D5%B7%D5%AB%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B6%D5%A5%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D6%81%D6%80%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B5%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC%D5%AB%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B3%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A1%D6%80%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D6%84%D5%A1%D6%80%D5%BF%D5%A5%D5%A6/

[2] https://factor.am/348573.html

ներկայացված Կառավարության հնգամյա (2021 - 2026 թթ.) ծրագրով[3] ներկայացվեցին զինված ուժերի բարեփոխումների իրականացման հետևյալ առաջնահերթությունները.

1. Զինծառայության ժամկետների էական փոփոխություն՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի,աստիճանաբար անցում պրոֆեսիոնալ բանակի:

2. Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացում, պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացում, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայում, նոր ռազմական դոկտրինի մշակում, միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում:

3. Արդյունավետության բարձրացում զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման միջոցով:

4. Սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում:

5. Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում:

6. Ռազմական կրթության և գիտության զարգացում:

7. Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխումներ:

8. Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում:

9. Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացում, զինծառայության գրավչության բարձրացման և զինծառայողի հեղինակության մեխանիզմների կատարելագործում, զինծառայողների բնակարանային ապահովության ուղղությամբ ծրագրերի իրականացում, պատերազմի հետևանքներն իրենց վրա կրող զինծառայողների սոցիալական և առողջապահական նոր ծրագրեր:

[3] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155328, http://www.irtek.am/views/act.aspx?aid=112199, https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2021/08/24/Nikol-Pashinyan-Speech/,

10. Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության, զինված ուժերի կարգապահության խթանման, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում:

11. Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացում:

Կառավարության հնգամյա ծրագրի՝ զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ ենթակետն ամփոփվում է հետևյալ կերպ. «Հայաստանի Հանրապետությունը, ինչպես ցանկացած խաղաղասեր պետություն, Զինված ուժերը զարգացնելու և վերափոխելու է ոչ թե ագրեսիայի, այլ ագրեսիայից պաշտպանվելու նպատակով: Հայաստանի Հանրապետությունը տարածքներ նվաճելու մտադրություն չունի»:

2021 թ. հունիսի 30-ին Կազմակերպությունը տեղեկատվություն ստանալու նպատակով դիմեց ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարին՝ պարզաբանելու, թե արդյոք ՀՀ պաշտպանության նախարարությունը, ԶՈՒ գլխավոր շտաբը եւ դրանց ենթակակառույցները ենթարկվել են կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների, ինչպիսի մոտեցումներ կան զինված ուժերի վերակազմավորման ուղղությամբ, ինչպես նաև՝ ինչ սկզբունքների, մոտեցումների եւ նպատակների վրա է հիմնված բարեփոխումների հայեցակարգը, և ինչու չի ստեղծվել հնարավորություն հանրության համար ծանոթանալու զինված ուժերում փոփոխությունների իրականացման գործընթացին և հայեցակարգին:

Ի պատասխան՝ 2021 թ. օգոստոսի 2-ին ՀՀ ԱԽ քարտուղարը տեղեկացրեց, որ «զինված ուժերի բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է իրականացնել կառուցվածքային փոփոխություններ, սակայն ներկայումս դրանք դեռևս ներգերատեսչական քննարկումների փուլում են, ուստի՝ Կազմակերպության հարցին կարող են պատասխանել միայն քննարկումների արդյունքները ամփոփելուց հետո»:

Սույն տեղեկանքում ներկայացվում է մատչելի տեղեկությունների հիման վրա 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո ԶՈՒ բարեփոխումներին

ուղղված գործողությունների իրագործման գնահատումն ըստ ՀՀ ԱԺ կողմից հաստատված՝ Կառավարության հնգամյա ծրագրով նախատեսված առաջնահերթությունների։

Որպես տեղեկատվության աղբյուր են օգտագործվել պաշտոնատար անձանց կողմից զանգվածային լրատվամիջոցներին ներկայացված տեղեկությունները։

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹԹ ԾՐԱԳՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԲԱՐՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Առաջնահերթություն 1

Զինծառայության ժամկետների էական փոփոխություն՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի, աստիճանաբար անցում պրոֆեսիոնալ բանակի

Սույն առաջնահերթությունը ներառվել է Կառավարության հնգամյա ծրագրում «հաշվի առնելով զինվորական ծառայության զարգացման ու կատարելագործման հեռանկարները»: Ծրագրի համաձայն՝ այս կերպ «Կառավարությունը խթանելու է զինվորական ծառայության շահադրդման թե՛ նյութական, և թե՛ բարոյահոգեբանական մեխանիզմները»:

2021թ. հունիսի 28-ին ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը Հանրային հեռուստաընկերության հաղորդավար Պետրոս Ղազարյանի հետ զրույցում հայտնեց[4], որ Հայաստանում իրականացվող զինված ուժերի բարեփոխումների արդյունքում ժամկետային պարտադիր զինծառայության ժամկետը կարող է կրճատվել՝ երկու տարվա փոխարեն դառնալով մեկուկես տարի:

Նա նաև հայտնեց, որ ինտենսիվ և լայնածավալ աշխատանքներ են կատարվել ԱԽ աշխատակազմի, պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի և այլ գերատեսչությունների կողմից՝ ԶՈՒ բարեփոխումների հայեցակարգը նախապատրաստելու, գործողությունների պլանը մշակելու համար: Ա. Գրիգորյանը

[4] https://www.civilnet.am/news/624388/%d5%ba%d5%a1%d6%80%d5%bf%d5%a1%d5%a4%d5%ab%d6%80-%d5%a6%d5%ab%d5%b6%d5%ae%d5%a1%d5%bc%d5%a1%d5%b5%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%a8-%d5%a5%d6%80%d5%af%d5%b8%d6%82-%d5%bf%d5%a1%d6%80%d5%b8%d6%82%d6%81-%d5%af%d5%a1%d6%80%d5%b8%d5%b2-%d5%a7-%d5%a4%d5%a1%d5%bc%d5%b6%d5%a1%d5%ac-%d5%b4%d5%a5%d5%af%d5%b8%d6%82%d5%af%d5%a5%d5%bd-%d5%bf%d5%a1%d6%80%d5%ab-%d5%a1%d5%bd%d5%a5%d5%ac-%d5%a7-%d5%a1%d5%ad-%d6%84%d5%a1%d6%80%d5%bf%d5%b8%d6%82%d5%b2%d5%a1%d6%80%d5%a8/?fbclid=IwAR35YgtJGqIBSIyXzZIajn_wP79WEWc7EdRSfnAkKmwM-uQtp6y5Y_SWx8c, https://www.youtube.com/watch?v=U49rI0aSHZk&t=21s

միաժամանակ հայտնեց, որ հասել են հայեցակարգի ձևավորման վերջնական փուլին, և մոտ ապագայում այն կհաստատվի:

ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղարը նշեց նաև, որ «բանակը ժամանակի ընթացքում պետք է դառնա պրոֆեսիոնալ»: Ըստ նրա՝ որոշակի ժամանակ է պետք պրոֆեսիոնալ բանակի անցնելու համար, սակայն ընդհանուր բարեփոխումների տրամաբանության մեջ նաև այդ հիմքն է դրված:

2021 թ. հունիսի 30-ին ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը «Սիվիլնեթին» տված հարցազրույցի ժամանակ հայտնեց, որ պրոֆեսիոնալ բանակի անցման համատեքստում զինված ուժերում նախատեսվում են անձնակազմի կրճատումներ. շեշտը դրվելու է արհեստավարժության, սպառազինության, կրթության որակի և վարժանքների ինտենսիվության վրա[5]:

2021 թ. օգոստոսի 20-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը կրկին Հանրային հեռուստաընկերության եթերում Պետրոս Ղազարյանի հետ հարցազրույցում նշեց[6], որ փոփոխություններ են նախատեսվում ԱԱԾ սահմանապահ զորքերում՝ համաձայն որի՝ սահմանային հսկողությունն ու պաշտպանությունն ամբողջապես պիտի փոխանցվի սահմանապահ զորքերին: Այդ նպատակով պետք է ընդլայնվի ԱԱԾ սահմանապահ զորքերի թվաքանակը, իսկ բանակն ամբողջապես պետք է կենտրոնանա ռազմական գործի արդյունավետության և մասնագիտացման խնդիրների լուծման վրա և միայն ըստ անհրաժեշտության իրականացնի ռազմական գործողություններ՝ սահմանների պաշտպանության նպատակով:

Արդեն 2021 թ. օգոստոսի 22-ին[7] ՀՀ գլխավոր շտաբի պետ Արտակ Դավթյանը «Սպուտնիկ Արմենիա»-ի հետ հարցազրույցում հայտնեց, որ մեկնարկել է պրոֆեսիոնալ բանակի ձևավորման գործընթացը:

Միաժամանակ ՀՀ գլխավոր շտաբի պետը շեշտեց, որ անցումը պրոֆեսիոնալ բանակին չի նշանակում, թե պետք է հրաժարվել «խառը կոմպլեկտավորման

[5] https://www.civilnet.am/news/624650/ունենալու-ենք-պրոֆեսիոնալ-բանակ՝-կրճատված-թվակազմով-անդրանիկ-քոչարյան
[6] https://www.youtube.com/watch?v=S9y7UAMyvsQ
[7] https://armeniasputnik.am/20210822/jamketayin-tsarayutyuny-petqe-pahpanvi-gsh-pet-28742964.html

սկզբունքից», մասնավորապես հայտնելով, որ ժամկետային ծառայությունը պետք է պահպանվի: Ինչ վերաբերում է ժամկետային զինծառայության ժամկետներին, ապա ՀՀ գլխավոր շտաբի պետը Ա. Դավթյանը նշեց, որ ժամկետների կրճատման հարցը քննարկման փուլում է:

2021 թ. օգոստոսի 24-ին ՀՀ ԱԺ-ում Կառավարության հնգամյա ծրագրի ներկայացման ժամանակ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադառնալով ԶՈՒ բարեփոխումներին նշեց[8], որ «պրոֆեսիոնալ բանակ ասելով պետք է նկատի ունենալ, որ զինվորը զինվոր է օրվա մեջ 24 ժամ, շաբաթվա մեջ յոթ օր, տարվա մեջ 12 ամիս»:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ զինվորական ծառայության ժամկետների փոփոխության վերաբերյալ վերջնական որոշում դեռևս չի կայացվել, միաժամանակ հստակ չեն պրոֆեսիոնալ բանակի անցնելու վերաբերյալ մոտեցումները, և շարունակում է գործել մինչ այժ կիրառվող «խառը կոմպլեկտավորման սկզբունքը»: Նկատենք, որ չնայած Կառավարության ծրագրով նախատեսված սկզբունքին՝ այն է «աստիճանաբար անցում պրոֆեսիոնալ բանակին» ՀՀ գլխավոր շտաբի պետը գտնում է, որ «ժամկետային ծառայությունը պետք է պահպանվի», ինչքան ժամանակով՝ նույնպես հստակ չէ և այդ մասին նույնպես դեռևս վերջնական որոշում չի ընդունվել:

[8] https://epress.am/2021/08/24/1733-6.html

Առաջնահերթություն 2

Զինված ուժերի կառավարման և ղեկավարման համակարգի արդյունավետության բարձրացում, պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացում, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայում, նոր ռազմական դոկտրինի մշակում, միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրում

Նշված առաջնահերթությամբ Կառավարությունը նախատեսում է իրականացնել «պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ, այդ թվում՝ պետության ռազմական անվտանգության համակարգի մարմինների պաշտպանության ոլորտին առնչվող լիազորությունների ու պարտականությունների»:

Ազգային անվտանգության ռազմավարության վերանայումից և նոր ռազմական դոկտրինի մշակումից բացի, ՀՀ Կառավարության հնգամյա ծրագրով նախատեսվում է մշակել «պետության պաշտպանության պլան», որի համար նախատեսվում է «կատարելագործել պետությունը պաշտպանության նախապատրաստելու գործիքակազմերն ու ընթացակարգերը»: Սույն կետում նաև ներկայացվում է միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրման մասին, որն իրականացվելու է «զինված ուժերի կառավարման և ղեկավարման արդյունավետության բարձրացման և որոշումների կայացման ժամանակահատվածը կրճատելու նպատակով»: Մասնավորապես՝ ըստ ծրագրի՝ «ներդրվելու է ավտոմատացված կառավարման այնպիսի համակարգ, որն ապահովելու է

ժամանակակից ռազմական գիտությանը համահունչ արագ և առաջանցիկ որոշումների կայացումը»: Այդ նպատակով նախատեսվում է զինված ուժերի կառավարման և զորային օղակներում իրականացնել կազմակերպչական և հաստիքային փոփոխություններ: Հավելվում է, որ «առաջադրված խնդիրների լուծման նպատակով կազմավորվելու են մեծ շարժունակությամբ և կրակային հզորությամբ, երկար ժամանակ ինքնուրույն մարտական գործողություններ վարելու ունակ զորամիավորումներ ու ստորաբաժանումներ»:

Դեռևս 2019 թ. հուլիսին Ազգային անվտանգության ռազմավարության վերանայման նպատակով ձևավորվել էր միջգերատեսչական հանձնախումբ[9]: 2020 թ. հուլիսի 10-ին ՀՀ անվտանգության խորհրդի նիստում ընդունվեց ազգային անվտանգության ռազավարությունը[10] :

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ սահմանվող դրույթի համաձայն, այն է՝ «ազգային անվտանգության ռազմավարության վերանայման ու նոր ռազմական դոկտրինի մշակման» ուղղությամբ իրականացվող քայլերի մասին տեղեկություններ հայտնի չեն: Մասնավորապես՝ հայտնի չէ, թե արդյոք ձևավորվել է միջգերատեսչական հանձնախումբ ազգային անվտանգության ռազմավարության վերանայման նպատակով: Հայտնի չէ, թե ինչ քայլեր են կատարվել պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծման ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների, պետության ռազմական անվտանգության համակարգի մարմինների պաշտպանության ոլորտին առնչվող լիազորությունների ու պարտականությունների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ:

[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132814
[10] https://www.seco.am/security_council/sessions/61?lang=hy, https://factor.am/277254.html
https://www.seco.am/pdf/%D4%B1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%20%D5%A1%D5%B6%D5%BE%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%202020.pdf

Առաջնահերթություն 3

Արդյունավետության բարձրացում զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման միջոցով

Կառավարության սույն առաջնահերթությանը՝ զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավմամբ արդյունավետության բարձրացմանը հասնելու նպատակով, ըստ հնգամյա ծրագրի, «ձևավորվելու են մեծ շարժունակությամբ օժտված մարտական կազմավորումներ»:

2021 թ. հուլիսին ՀՀ պաշտպանության նախարարությունը հատարարություն տարածեց[11] ՀՀ ԶՈՒ բարեփոխումների շրջանակում զինծառայողների իրավունքների պաշտպանության, զորային օղակում իրավական խնդիրների ապահովման նպատակով զինված ուժերը իրավաբաններով համալրելու վերաբերյալ:

ՀՀ Կառավարության 2021 թ. սեպտեմբերի 29-ին 1084-Լ[12] որոշմամբ «Զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով գլխավոր վարչությունը» վերակազմավորվեց «զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության[13]»: իսկ «մարդու իրավունքների և բարեվարքության կազմակերպման կենտրոնը[14]» սկսեց գործել «բաժնի կարգավիճակով»: Կառավարության ծրագրի ընդունումից հետո, այնուամենայիվ, զինված ուժերում հաստիքային կառուցվածքի բարելավման վերաբերյալ այլ տեղեկություններ հայտնի չեն:

Նշենք, որ 2018 թ. դեկտեմբերից ՀՀ զինված ուժերում սկսվեց զինվորական կոմիսարիատների վերակազմավորում. ՀՀ զինվորական կոմիսարիատը վերանվանվեց ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն, իսկ ՀՀ մարզերի տարբեր քաղաքներում, ինչպես նաև Երևան քաղաքի մի քանի տարբեր վարչական շրջաններում գործող զինկոմիսարաիտները միավորվեցին՝

[11] https://mil.am/hy/news/9604
[12] https://www.e-gov.am/decrees/item/23896/
[13] https://mil.am/hy/structures/52
[14] https://www.mil.am/hy/structures/8

դառնալով ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներ: Այնուամենայնիվ, նախկինում առանձին գործող զինկոմիսարահիտները ևս պահպանվեցին, չնայած հստակ չէ, թե ինչ գործառույթներ են իրականացնում վերջիններս, և ինչով են այդ գործառույթները տարբերվում տարածքային ստորաբաժանումների իրականացրած գործառույթներից[15]:

Անդրադառնալով զինված ուժերի կառուցվածքային և հաստիքային կառուցվածքի բարելավմանը՝ տեղին է ներկայացնել պաշտպանական ոլորտի բարձրաստիճան պաշտոնյաների կադրային-հաստիքային շարունակական փոփոխությունների վերաբերյալ փաստերը:

Նախ՝ դիտարկենք ՀՀ պաշտպանական գերատեսչության ղեկավարների փոփոխությունների և նրանց պաշտոնավարման ժամանակահատվածները վերջին երկու տասնամյակի ընթացքում:

Այսպես, 2000 թ.-ի մայիսից սկսած ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցնում էր Սերժ Սարգսյանը, ով պաշտոնավարել է 7 տարի՝ մինչև 2007 թ. ապրիլը: Ի դեպ Ս. Սարգսյանը այդ պաշտոնը զբաղեցրել է նաև 1993 - 1995 թթ.:

Այնուհետև՝ 2007 թ. ապրիլին ՀՀ պաշտպանության նախարար նշանակվեց Միքայել Հարությունյանը, ով 1 տարի անց՝ 2008 թ. ապրիլին ազատվեց զբաղեցրած պաշտոնից:

2008 թ. ապրիլի 14-ին Միքայել Հարությունյանին այդ պաշտոնում փոխարինեց Սեյրան Օհանյանը, ով պաշտոնավարեց 8 տարի՝ մինչև 2016 թ.-ի հոկտեմբերի 3-ը:

2016 թ. հոկտեմբերի 3-ին ՀՀ պաշտպանության նախարար նշանակվեց[16] Վիգեն Սարգսյանը, ով նշված պաշտոնը զբաղեցրեց ավելի կարճ ժամկետով՝ մինչև 2018 թ. մայիսի 8-ը, երբ հրաժարականի դիմում ներկայացրեց Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունից հետո[17]:

2018 թ. մայիսի 11-ին ՀՀ պաշտպանության նախարար նշանակված Դավիթ Տոնոյանը, թերևս, միակն էր հեղափոխությունից հետո նշանակված նախարարներից,

[15] https://factor.am/107880.html
[16] https://www.president.am/hy/decrees/item/3261/
[17] https://armeniasputnik.am/20180508/armenia-vigen-sargsyan-11923831.html

ով պաշտոնավարեց համեմատաբար երկար՝ ավելի քան 2 տարի և նույնպես հրաժարականի դիմում ներկայացնելով՝ ազատվեց զբաղեցրած պաշտոնից 2020 թ. Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողությունների ավարտից կարճ ժամանակ անց՝ 2020 թ. նոյեմբերի 20-ին[18]:

2020 թ. նոյեմբերի 20-ին ՀՀ պաշտպանության նախարար նշանակված Վաղարշակ Հարությունյանը պաշտոնավարեց 8 ամիս և ազատվեց պաշտոնից 2021 թ. հուլիսի 20-ին[19]:

2021 թ. օգոստոսի 2-ին ՀՀ պաշտպանության նախարար նշանակվեց Արշակ Կարապետյանը, ով պաշտոնավարեց ընդամենը 3 ամիս և 2021 թ. նոյեմբերի 15-ին ազատվեց զբաղեցրած պաշտոնից՝ հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակի սրման ժամանակահատվածում[20]:

Ներկայացվող տեղեկանքի կազմման ժամանակ կատարվեց պաշտպանության նախարարի հերթական փոփոխությունը. 2021 թ. նոյեմբերի 15-ին ՀՀ պաշտպանության նախարար նշանակվեց Սուրեն Պապիկյանը[21]:

Այսպիսով՝ վերջին 20 տարվա ընթացքում տեղի է ունեցել ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնի 8 փոփոխություն, և 8 անձ է ղեկավարել պաշտպանական գերատեսչությունը, որոնցից 4-ը միայն վերջին 3 տարվա ընթացքում:

Նշենք, որ այս կադրային փոփոխությունների իրականացման վերաբերյալ հանրությանը չի ներկայացվել որևէ հիմնավորում կամ պատճառաբանություն, բացառությամբ 2021 թ. նոյեմբերի 15-ի նշանակումից, որը ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը հիմնավորեց[22] քաղաքական թիմի ամբողջացման տրամաբանությամբ: Արդյոք կադրային այս փոփոխությունները պայմանավորված են զինված ուժերի բարեփոխումների և զարգացման իրականացման անհրաժեշտությամբ՝ հայտնի չէ:

Ի դեպ, պետք է նկատել, որ բացի պաշտպանության նախարարի պաշտոնի վերը նշված փոփոխություններից կադրային-հաստիքային ինտենսիվ փոփոխություններ են իրականացվել նաև ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբում և ՀՀ ՊՆ այլ

[18] https://www.president.am/hy/decrees/item/5172/
[19] https://www.president.am/hy/decrees/item/5333/
[20] https://www.president.am/hy/decrees/item/5476/
[21] https://www.president.am/hy/decrees/item/5478/
[22] http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=15579&year=2021&month=11&day=17

ստորաբաժանումներում ինչպես Կառավարության հնգամյա ծրագրի հաստատումից՝ 2021 թ. օգոստոսից հետո, այնպես էլ դրանից առաջ:

Դիտարկենք 2018 թ. հետո ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետերի փոփոխությունների և նրանց պաշտոնավարման ժամանակահատվածները:

Այսպես, 2018 թ. մայիսին ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ նշանակված Արտակ Դավթյանը ազատվեց այդ պաշտոնից 2020 թ. հունիսի 8-ին՝ COVID-19 համավարակի կանխարգելման նպատակով սահմանված արտակարգ դրության ռեժիմի պահանջների խախտման պատճառով[23]:

2018 թ. հունիսի 8-ին այդ պաշտոնում նշանակվեց Օնիկ Գասպարյանը: 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողությունների դադարից հետո՝ Օնիկ Գասպարյանը մանրամասներ ներկայացրեց պատերազմի վերաբերյալ՝ հայտնելով, որ «պետք է ընտրություն կատարեինք շատ վատի և ողբերգության միջև, նախընտրել ենք շատ վատը» և շեշտել է, որ որպես զինված ուժերի գշխավոր շտաբի պետ՝ պատասխանատվություն է կրում Զինված ուժերի բոլոր հաջողությունների ու անհաջողությունների համար:

2021 թ. փետրվարին, սակայն, ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբը հայտարարություն տարածեց[24], որտեղ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին և ՀՀ Կառավարությանը՝ մեղադրելով «ադեկվատ» որոշումներ ընդունելու անկարողության մեջ, զինված ուժերը պահանջեցին ՀՀ վարչապետի և Կառավարության հրաժարականը: Հայտարարությանը միացան 40 բարձրաստիճան զինվորականներ: 2021 թ. փետրվարի 25-ին վարչապետի կողմից ՀՀ նախագահին ներկայացվեց առաջարկություն՝ ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Օնիկ Գասպարյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու վերաբերյալ: 2021 թ. մարտի 10-ից ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Օնիկ Գասպարյանն ազատվեց զբաղեցրած պաշտոնից[25]:

[23] https://www.president.am/hy/decrees/item/5020/
[24] https://news.am/arm/news/630560.html , https://www.facebook.com/samvel.asatryan.5074/posts/474964876863565
[25] https://www.gov.am/am/news/item/15002/?fbclid=IwAR0nSmxtSMh7NWcOF7xS_x-fdiKS0iBBj0VrIjUZbvkl4klik7tbrwGHgRQ

2021 թ. մարտի 22-ին ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի պաշտոնում վերստին նշանակվեց Արտակ Դավթյանը[26]:

Ի տարբերություն պաշտպանական գերատեսչության ղեկավարի՝ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնի փոփոխությունները ավելի քիչ են եղել, մասնավորապես՝ 3 տարվա (2018 - 2021 թթ.) ընթացքում 3 անգամ կատարվել է Գլխավոր շտաբի պետի փոփոխություն, որի արդյունքում նշանակվել է 2 անձ:

Դիտարկենք վերջին 2 տարվա՝ 2020 - 2021 թվականներին բարձրաստիճան զինվորական այլ պաշտոններում փոփոխությունները:

Այսպես՝ 2020 թ. փետրվարի 19-ին ՀՀ զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման վարչության պետի պաշտոնից ազատվեց Ալեքսան Ալեքսանյանը [27]: 2020 թ. մարտի 20-ին այս պաշտոնում նշանակվեց Արթուր Պողոսյանը[28]:

2020 թ. փետրվարի 19-ին ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության պետի պաշտոնից ազատվեց Արթուր Բաղդասարյանը: Եվ միայն 6 ամիս անց՝ 2020 օգոստոսի 20-ին այս պաշտոնում նշանակվեց Աշոտ Զաքարյանը[29]:

2020 թ. հունիսի 12-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ գլխավոր վարչության պետ-Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնից ազատվեց Տիրան Խաչատրյանը[30]: Այդ պաշտոնում նշանակվեց Կարեն Աբրահամյանը[31]:

2020 թ. հունիսի 12-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ գլխավոր վարչության պետի առաջին տեղակալի պաշտոնից ազատվեց[32] և ԶՈՒ ԳՇ պետի օգնական նշանակվեց[33] Կոմիտաս Մուրադյանը: Այդ պաշտոնում նշանակվեց Ստեփան Գևորգյանը:

---

[26] https://www.azatutyun.am/a/31162976.html
[27] https://www.president.am/hy/decrees/item/4974/
[28] https://www.president.am/hy/decrees/item/4988/
[29] https://www.president.am/hy/decrees/item/5067/
[30] https://www.president.am/hy/decrees/item/5027/
[31] https://www.president.am/hy/decrees/item/5028/
[32] https://www.president.am/hy/decrees/item/5026/
[33] https://irakanum.am/post/259813

2020 թ. նոյեմբերի 20-ին պաշտպանության նախարարության 5-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից ազատվեց Անդրանիկ Փիլոյանը[34]: Այս պաշտոնին նոր նշանակման վերաբերյալ տեղեկատվություն չի տարածվել:

2020 թ. դեկտեմբերի 28-ի Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության միացյալ շտաբի պետի տեղակալի պաշտոնից ազատվեց Հայկազ Բաղմանյանը [35]: ՀԱՊԿ-ի միացյալ շտաբի պետի նորանշանակ տեղակալի վերաբերյալ տեղեկատվություն չի տարածվել:

2021 թ. փետրվարի 24-ին Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալի պաշտոնից ազատվեց Տիրան Խաչատրյանը[36]: Երեք ամիս հետո՝ 2021 թ. մայիսի 21-ին, այս պաշտոնում նշանակվեց Էդվարդ Ասրյանը[37]:

Նկատենք, որ զինված ուժերի գլխավոր շտաբի հայտնի հայտարությանն անմիջապես հետևեց զինված ուժերի գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ Տիրան Խաչատրյանի պաշտոնանկությունը:

Անկախությունից հետո Հայաստանի ողջ պատմության մեջ առաջին անգամ զինված ուժերի բարձրաստիճան պաշտոնյաները կատարեցին աննախադեպ քայլ՝ դատական կարգով բողոքարկելով պաշտոնից իրենց ազատման վերաբերյալ իրավական ակտերը: Իհարկե ինքնին արտառոց է, երբ բարձրաստիճան զինվորական պաշտոնյաները դիմում են նման քայլերի, որը կարող է ընկալվել որպես ընդվզում քաղաքական ղեկավարության դեմ, բայց մյուս կողմից սա նոր նախադեպ է զինվորական պաշտոններից ազատվելու որոշումները իրավական մեխանիզմներով, դատական կարգով լուծելու նախադեպի ձևավորման տեսակետից:

2021 թ. մայիսի 4-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ գլխավոր վարչության պետ-Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի

[34] https://www.president.am/hy/decrees/item/5176/
[35] https://www.president.am/hy/decrees/item/5195/
[36] https://www.president.am/hy/decrees/item/5213/
[37] https://www.president.am/hy/decrees/item/5250/

պետի տեղակալի պաշտոնից ազատվեց Կարեն Աբրահամյանը[38]: 2021 թ. մայիսի 24-ին այդ պաշտոնում նշանակվեց Էդվարդ Ասրյանը[39]:

2021 թ. հունիսի 24-ին ՀՀ զինված ուժերի հակաօդային պաշտպանության զորքերի պետ-վարչության պետի պաշտոնից ազատվեց Արմեն Վարդանյանը [40]: Մոտ 2 ամիս անց՝ 2021 թ. օգոստոսի 17-ին, այդ պաշտոնում նշանակվեց Գարիկ Մովսեսյանը [41]:

2021 թ. հունիսի 24-ին ՀՀ զինված ուժերի ինժեներական զորքերի պետ-վարչության պետի պաշտոնից ազատվեց Իշխան Մաթևոսյանը[42]: Մոտ 2 ամիս անց՝ 2021 թ. օգոստոսի 17-ին, այդ պաշտոնում նշանակվեց Արմեն Առուշանյանը[43]:

2021 թ. հուլիսի 7-ին 3-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից ազատվեց Գրիգորի Խաչատուրովը[44]: Մոտ մեկ ամիս անց՝ 2021 թ. օգոստոսի 5-ին, Ալեքսանդր Ցականյանը նշանակվեց այդ պաշտոնում[45]:

2021 թ. հուլիսի 21-ին ՀՀ պաշտպանության նախարարության կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչության պետ Նորայր Սմբատյանն ազատվեց զբաղեցրած պաշտոնից[46]: Մեկ ամիս անց՝ 2021 թ. օգոստոսի 26-ին, այս պաշտոնում նշանակվեց Հրաչ Ստեփանյանը[47]:

2021 թ. օգոստոսի 6-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ գլխավոր վարչության պետի առաջին տեղակալի պաշտոնից ազատվեց Ստեփան Գևորգյանը[48]: 2021 թ. օգոստոսի 17-ին այս պաշտոնում նշանակվեց Ալբերտ Բուդաղյանը[49]:

---

[38] https://www.president.am/hy/decrees/item/5245/
[39] https://www.president.am/hy/decrees/item/5250/
[40] https://www.president.am/hy/decrees/item/5265/
[41] https://www.president.am/hy/decrees/item/5380/
[42] https://www.president.am/hy/decrees/item/5266/
[43] https://www.president.am/hy/decrees/item/5379/
[44] https://www.president.am/hy/decrees/item/5306/
[45] https://www.president.am/hy/decrees/item/5367/
[46] http://cpcarmenia.am/hy/declarations-registry/id=78036/
[47] https://www.president.am/hy/decrees/item/5386/
[48] https://www.president.am/hy/decrees/item/5368/
[49] https://www.president.am/hy/decrees/item/5378/

2021 թ. օգոստոսի 9-ին 2-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից ազատվեց Արայիկ Հարությունյանը[50]: Նրա փոխարեն այդ պաշտոնին նշանակվեց Վահրամ Գրիգորյանը [51]:

2021 թ. օգոստոսի 9-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության գլխավոր վարչության պետ-ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնից ազատվեց Առաքել Մարտիկյանը[52]: Այդ պաշտոնում նշանակվեց Արայիկ Հարությունյանը[53]:

2021 թ. օգոստոսի 9-ին 1-ին բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից ազատվեց Ժիրայր Պողոսյանը[54]: Այդ պաշտոնում նոր նշանակման մասին դեռևս տեղեկություն չի տարածվել:

2021 թ. օգոստոսի 26-ին 4-րդ բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնից ազատվեց և Հատուկ բանակային կորպուսի հրամանատար նշանակվեց Արտակ Բուդաղյանը[55]: Այդ պաշտոնում նոր նշանակման մասին դեռևս տեղեկություն չի տարածվել:

2021 թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ զինված ուժերի սպառազինության պետի պաշտոնից ազատվեց Պողոս Պողոսյանը[56]: Մոտ 1 ամիս անց 2021 թ. հոկտեմբերի 8-ին այս պաշտոնում նշանակվեց Մհեր Շիրինյանը[57]:

2021 թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչության պետի պաշտոնից ազատվեց Սահակ Օհանյանը[58]: Այդ պաշտոնում նոր նշանակման մասին դեռևս տեղեկություն չի տարածվել:

2021 թ. սեպտեմբերի 27-ին ՀՀ պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի պաշտոնից ազատվեց

[50] https://www.president.am/hy/decrees/item/5370/
[51] https://www.president.am/hy/decrees/item/5371/
[52] https://www.president.am/hy/decrees/item/5369/
[53] https://www.president.am/hy/decrees/item/5370/
[54] https://www.president.am/hy/decrees/item/5374/
[55] https://www.president.am/hy/decrees/item/5387/, https://www.president.am/hy/decrees/item/5388/
[56] https://www.president.am/hy/decrees/item/5392/
[57] https://www.president.am/hy/decrees/item/5431/
[58] https://www.president.am/hy/decrees/item/5391/

Խաչատուր Խաչատրյանը[59]: Այդ պաշտոնում նոր նշանակման մասին դեռևս տեղեկություն չի տարածվել:

2021 թ. սեպտեմբերի 27-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ գլխավոր վարչության պետ-ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնից ազատվեց Էդվարդ Ասրյանը[60]: Այդ պաշտոնում նոր նշանակման մասին դեռևս տեղեկություն չի տարածվել:

Այսպիսով՝ վերջին շուրջ 2 տարիների (22 և կես ամիսների) ընթացքում՝ 2020 թ. հունվարից մինչև 2021 թ. նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում, ԶՈՒ ԳՇ 19 պաշտոններում կատարվել են փոփոխություններ: Ընդ որում՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ գլխավոր վարչության պետի պաշտոնում փոփոխություն է կատարվել 3 անգամ, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի օպերատիվ գլխավոր վարչության պետի տեղակալի պաշտոնում՝ 2 անգամ: 19 պաշտոններում կատարված փոփոխություններից միայն 13-ը կատարվել է 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո, դրանցից 2 պաշոններում փոփոխություններ են կատարվել են նաև 2020 թ. նոյեմբերի 9-ից առաջ: Նկատենք, որ նշված 13 պաշտոններում կատարված ընդհանուր 15 կադրային փոփոխություններից 6-ը վերաբերել են այն զինվորական պաշտոնյաներին, ովքեր ստորագրել են ՀՀ ԶՈՒ ԳՇ հայտնի հայտարարությունը:

Ներկայումս, ըստ հասանելի պաշտոնական տվյալների ուսումնասիրության, 5 պաշտոններում դեռևս նոր նշանակումներ չեն կատարվել:

Ինչ վերաբերում է զինվորական պաշտոնյաներին պաշտոնից ազատելուց հետո նոր նշանակումների ժամանակահատվածին, ապա նշենք, որ վերոնշյալ պաշտոններում զինվորական պաշտոնյայի ազատման վերաբերյալ հրամանագրից հետո հաջորդ նշանակումը հիմնականում կատարվել է մինչև 1 ամսվա ընթացքում, մինչդեռ 4 դեպքում նոր նշանակումներ կատարվել են բավականին ուշ՝ 2 ամիս (2 պաշտոնում), 3 ամիս և 6 ամիս անց:

[59] https://www.president.am/hy/decrees/item/5427/
[60] https://www.president.am/hy/decrees/item/5438/

Այսպիսով՝ զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման ուղղությամբ, բացի կադրային լայնածավալ փոփոխություններից, այլ գործողությունների մասին տեղեկություն չի հրապարակվել:

Իհարկե, տրամաբանական և հիմնավորված է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պաշտոնյաների կողմից հայտնի հայտարարությունը ստորագրածների առնվազն ազատումն իրենց պաշտոններից, քանի որ նրանք խախտել են սահմանադրության հիմնարար սկզբունքներից մեկը՝ զինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքը, սակայն հասկանալի չէ թե ինչու չեն ազատվել հայտարարությունը ստորագրած մյուս անձինք ևս:

Մյուս կողմից հայտնի չէ՝ մյուս զինվորական բարձրաստիճան պաշտոնյաների կադրային փոփոխություններն ինչքանով են պայմանավորված զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման խնդիրների լուծմամբ, քանի որ ըստ էության կադրային այս փոփոխություններն իրականացվել են գոյություն ունեցող և չբարելավված ԶՈՒ կառուցվածքի շրջանակներում:

Առաջնահերթություն 4

Սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացում

Սույն առաջնահերթությամբ նախատեսվում է խթանել ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը՝ հիմնված հայաստանյան գիտահետազոտական ներուժի և միջազգային փորձի վրա։

Կառավարության հնգամյա ծրագրի համաձայն՝ «շարունակվելու են սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման և նոր նմուշների ձեռքբերման գործընթացները: Առավել նպատակային քաղաքականություն է իրականացվելու դաշնակից և գործընկեր պետությունների հետ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում: Հատուկ կարևորություն է տրվելու այդ ոլորտում դաշնակցային և գործընկերային հարաբերությունների

զարգացմանը, մասնավորապես՝ ընդլայնվելու է Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությունը, որն առաջնահերթ ուղղվելու է համատեղ ուժերի (համակարգերի) ռազմական ներուժի ավելացմանը և երկու պետությունների զինված ուժերի առավելագույն փոխգործունակության ապահովմանը»:

2021 թ. ապրիլի 23-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը «ՌԻԱ Նովոստիի» հետ զրույցում հայտարարեց[61], որ Հայաստանի զինված ուժերի բարեփոխումները կիրականացվեն Ռուսաստանի հետ գործակցությամբ: Նա կարծիք հայտնեց, որ «Ռուսաստանի զինված ուժերի բարեփոխումները վերջին 12 տարում ամենահաջողվածներից են. բանակի արդիականացումը և օպտիմիզացումը, արդյունավետության բարձրացումը, կառավարման ավտոմատ համակարգերի ներդրումը օգնել են Ռուսաստանին շարունակել ունենալ ամենահզոր բանակներից մեկն աշխարհում: Ա. Գրիգորյանը վստահություն հայտնեց, որ «Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը կկառուցի հզոր բանակ»: Անդրադառնալով սպառազինության գնմանը՝ Գրիգորյանը հայտնեց, որ նախատեսվում է գնել լավագույն զենքը:

2021 թ. օգոստոսի 22-ին «Սպուտնիկ Արմենիայի» հետ զրույցում ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Արտակ Դավթյանը հայտնեց, որ նոր սպառազինություն ձեռք բերելու համար բոլոր հնարավորությունները կան: Նա հավելեց, որ երբ դրա ժամանակը գա, ապա կցուցադրեն համագործակցության շրջանակներում ձեռքբերված միջոցները[62]: Հատկանշական է, որ Կառավարության հնգամյա ծրագրով նախատեսելով առավել նպատակային քաղաքականություն իրականացնել դաշնակից և գործընկեր պետությունների հետ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում, հատուկ կարևորություն է տրվել Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցությանը, որն առաջնահերթ ուղղվելու է «համատեղ ուժերի (համակարգերի) ռազմական ներուժի ավելացմանը և երկու պետությունների զինված ուժերի առավելագույն փոխգործունակության ապահովմանը»:

[61] https://ria.ru/20210423/armiya-1729623625.html
[62] https://www.lragir.am/2021/08/22/663023/

2021 թ. օգոստոսի 2-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի պաշտոնակատար Հայկ Չոբանյանը «Ազատության» հետ հարցազրույցում տեղեկացրեց[63], մինչև 2023 թ. ակնկալվում է գրեթե կրկնապատկել հայկական արտադրության անօդաչու թռչող սարքերի համար նախատեսված ֆինանսական միջոցները: Իսկ 2030 թվականին նախատեսվում է, որ այդ շուկան կհասնի մինչև 93 միլիարդ դոլարի:

2021 թ. օգոստոսի 27-ին լրագրողների հետ ճեպազրույցում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Վահագն Խաչատուրյանը հայտնեց, որ ՀՀ պաշտպանության նախարարության հետ միասին նախաձեռնվել է համագործակցություն հայկակական արտադրության ԱԹՍ-ի արտադրողների հետ: Գործընթացը, ըստ Վահագն Խաչատուրյանի, հասել է արտադրական և փորձարկման փուլին[64]:

Կառավարության հնգամյա ծրագրի «Արտաքին քաղաքականություն» ենթաբաժնում մասնավորեցվում է, որ ՀԱՊԿ-ը դիտարկելով որպես ՀՀ անվտանգային համակարգի կարևորագույն օղակ, Կառավարությունը շարունակելու է ակտիվորեն ներգրավված լինել կառույցի աշխատանքներին:

Այս առաջնահերթության նախատեսված խնդիրների լուծման տեսակետից ուշագրավ է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պաշտոնատար անձանց հանդիպումները զինված ուժերի բարեփոխումների՝ հատկապես սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման համատեքստում:

[63] https://www.azatutyun.am/a/31389827.html
[64] https://www.civilnet.am/news/630840/%D5%BA%D5%B6-%D5%A8-%D5%BA%D5%A1%D5%BF%D6%80%D5%A1%D5%BD%D5%BF-%D5%A7-%D5%AB%D6%80-%D5%BD%D5%BA%D5%A1%D5%BC%D5%A1%D5%A6%D5%AB%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D6%80%D5%A5%D5%AC-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%A9%D5%BD-%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D5%BE%E2%80%A4-%D5%BE%D5%A1%D5%B0%D5%A1%D5%A3%D5%B6-%D5%AD%D5%A1%D5%B9%D5%A1%D5%BF%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6/

Ռուսաստանի Դաշնության պաշտպանական ոլորտի պաշտոնյաների այցելությունները Հայաստանի Հանրապետություն և պաշտպանության բնագավառում հայ-ռուսական համագործակցության նպատակով այլ հանդիպումները

2020 թ. նոյեմբերի 21-ին Հայաստանի պաշտպանության նախարարությունում տեղի ունեցավ ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի և ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուի գլխավորած պատվիրակությունների հանդիպումը[65]:

2020 թ. նոյեմբերի 30-ին ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին[66]:

2021 թ հունվարի 28-ին «բանակի օրվա» կապակցությամբ ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինն այցելեց ՀՀ պաշտպանության նախարարություն, հանդիպեց ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Օնիկ Գասպարյանի հետ[67]:

2021 թ. հունվարի 25-ին[68] և 29-ին[69] ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանը ընդունեց հայ-ռուսական երկկողմ ռազմական համագործակցության ուղղություններով շտաբային բանակցությունների մասնակցելու նպատակով Հայաստանում գտնվող ռուսական պատվիրակության ղեկավար, ՌԴ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ-գնդապետ Սերգեյ Իստրակովին: Հունվարի 25-ին Սերգեյ Իստրակովի հանդիպեց նաև ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Օնիկ Գասպարյանի հետ:

2021 թ. մայիսի 14-ին ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Վաղարշակ Հարությունյանն ընդունեց ՌԴ զինված ուժերի հարավային ռազմական օկրուգի հրամանատար, բանակի գեներալ Ալեքսանդր Դվորնիկովին (ՌԴ ԶՈՒ

[65] https://www.azatutyun.am/a/30961944.html
[66] https://mil.am/hy/news/8713
[67] https://mil.am/hy/news/8852
[68] https://mil.am/hy/news/8841
[69] https://mil.am/hy/news/8860

հարավային ռազմական օկրուգի ենթակայության տակ է գտնվում Հայաստանում տեղակայված 102-րդ ռուսական ռազմակայանը)[70]:

2021թ. հունիսի 30-ին կայացավ ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի հանդիպումը ՀՀ Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի և ՀՀ-ում ՌԴ դեսպանության պաշտպանության հարցերով կցորդ, գնդապետ Անդրեյ Գրիշչուկի հետ[71]:

2021 թ. հուլիսի 13-ին ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Վաղարշակ Հարությունյանն ընդունեց ՌԴ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ-գնդապետ Սերգեյ Իստրակովի գլխավորած պատվիրակությանը[72]:

2021 թ. օգոստոսի 27-ին ՀՀ պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանն ընդունեց[73] ՀԱՊԿ Միացյալ շտաբի պետի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Հասան Կալոնի գլխավորած պատվիրակությանը:

2021 թ. օգոստոսի 9-ին ՀՀ պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանն ընդունեց ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասին[74]:

2021 թ. սեպտեմբերի 2-ին ՀՀ պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանն ընդունեց է Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության ռազմական մասնագետների պատվիրակությանը[75]:

Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի պաշտոնյաների այցելություններները Ռուսաստանի Դաշնություն

[70] https://mil.am/hy/news/9399?fbclid=IwAR1qDHMUsaT_P4l2kH-HolHfQ3r3Lb96miJjtl79NyFWBb_LG0kM-NAwZ1w
[71] https://www.mil.am/hy/news/9599
[72] https://www.azatutyun.am/a/31357563.html
[73] https://www.1lurer.am/hy/2021/08/27/%D4%B1%D6%80%D5%B7%D5%A1%D5%AF-%D4%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B5%D5%A1%D5%B6%D5%B6-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%80%D4%B1%D5%8A%D4%BF-%D5%84%D5%AB%D5%A1%D6%81%D5%B5%D5%A1%D5%AC-%D5%B7%D5%BF%D5%A1%D5%A2%D5%AB-%D5%BA%D5%A5%D5%BF%D5%AB-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%AC%D5%AB%D5%B6/544605
[74] https://www.azatutyun.am/a/31401416.html
[75] https://hetq.am/hy/article/135302

2020 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանի գլխավորած պատվիրակությունը աշխատանքային այցով մեկնեց Ռուսաստանի Դաշնություն՝ հանդիպելու Սերգեյ Շոյգուի և բարձրաստիճան այլ անձանց հետ[76]:

2021 թ. ապրիլի 29-ին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-լեյտենանտ Արտակ Դավթյանի գլխավորած պատվիրակությունը Մոսկվայում հանդիպեց ՌԴ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ-պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, բանակի գեներալ Վալերի Գերասիմովի գլխավորած պատվիրակության հետ[77]:

2021 թ. մայիսի 28-ին ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Վաղարշակ Հարությունյանը Մոսկվայում հանդիպեց Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար, բանակի գեներալ Սերգեյ Շոյգուի հետ[78]:

2021 թ. հուլիսի 27-ին[79] Մոսկվայում կայացավ ՀՀ պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանի և ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուի հանդիպումը:

2021 թ օգոստոսի 10-ին ևս ՀՀ պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանը և ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն հանդիպեցին Մոսկվայում[80]:

2021 թ. օգոստոսի 28-ին Ռուսաստան կատարած այցի ընթացքում ՀՀ պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանը հանդիպեց ՌԴ խոշոր ռազմաարդյունաբերական ընկերությունների ղեկավարների հետ[81]:

2021 թ. սեպտեմբերի 2-ին ՌԴ-ում կայացավ ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի հանդիպումը ՌԴ գլխավոր դատախազ Իգոր Կրասնովի հետ[82]:

---

[76] https://mil.am/hy/news/8732, https://armenpress.am/arm/news/1062723.html
[77] https://www.mil.am/hy/news/9328?fbclid=IwAR1nWGc9sFBlKFv9mGEKF0XOV9dB3WE210EpQXKB4dXKOYb4__uXpCdeOAw
[78] https://www.mil.am/hy/news/9480?fbclid=IwAR2TMSe5sjQoqDP-ENZOz7T82hd8zfVfAhae1ePuZ7vk8bHulmsP-0frHk8
[79] https://lenta.ru/news/2021/07/27/shoigu_kavkaz/
[80] https://www.azatutyun.am/a/31379739.html, https://www.azatutyun.am/a/31404577.html, https://www.civilnet.am/news/628859/%D5%A1%D6%80%D5%B7%D5%A1%D5%AF-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B4%D5%A5%D5%AF%D5%B6%D5%A5%D5%AC-%D5%A7-%D5%B4%D5%B8%D5%BD%D5%AF%D5%BE%D5%A1/
[81] https://tsayg.am/%D5%BA%D5%B6-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80-%D5%A1%D6%80%D5%B7%D5%A1%D5%AF-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B6%D5%A4%D5%AB%D5%BA%D5%B8/

2021 թ. հոկտեմբերի 11-ին Մոսկվայում կայացավ ՀՀ պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանի հանդիպումը ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուի հետ[83]:

ՀՀ և ՌԴ պաշտպանության նախարարների հանդիպումներից մեկի ժամանակ՝ 2021 թ. օգոստոսի 11-ին ՌԴ պաշտպանության նախարարը պատրաստակամություն է հայտնել «շարունակել աջակցությունը Հայաստանին՝ բանակի արդիականացման ու վերակազմավորման հարցում՝ մեծ կարևորություն տալով փոխգործակցության զարգացմանը ռազմական ոլորտում՝ թե՛ երկկողմ ձևաչափով, թե՛ ՀԱՊԿ շրջանակներում»:

Այսպիսով՝ Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի միջև 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության[84] ստորագրումից հետո մինչ այժմ՝ 2021 թ. նոյեմբերի 15-ը ՌԴ բարձրաստիճան զինվորականները, պաշտպանության բնագավառի պաշտոնյաները կատարել են առնվազն 10 այցելություն Հայաստան, որի ընթացքում հանդիպել են ՀՀ ՊՆ, ԶՈՒ ԳՇ և այլ ստորաբաժանումների պաշտոնյաների հետ: Նույն ժամանակահատվածում Հայաստանի զինվորական պաշտոնյաները Ռուսաստան են այցելել 8 անգամ. և սա միայն հրապարակայնացված հանդիպումների մասին է խոսքը: Այսինքն՝ մեկ տարվա ընթացքում զինված ուժերի բարեփոխումների և զարգացման, այդ թվում՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման նպատակով տեղի են ունեցել հայ - ռուսական առնվազն 18 հանդիպում:

Երկար տարիներ ՀՀ ԶՈՒ բարեփոխումների, հատկապես պաշտպանության գերատեսչության հաշվետվողականության, թափանցիկության, ԶՈՒ-ում բարեվարքության, զինծառայողների իրավունքների պաշտպանության մեխանիզմների ներդրման և հզորացման և այլ ուղղություններով ռեսուրս է հանդիսացել ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի Անհատական գործընկերության

[82] https://www.prosecutor.am/am/mn/8258/
[83] https://mil.am/hy/news/10012
[84] https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/

գործողությունների ծրագիրը (ԱԳԳ) , որի մասին սակայն Կառավարության հնգամյա ծրագրում հիշատակված է «Արտաքին քաղաքականություն» ենթաբաժնում:

Նկատենք, որ ՆԱՏՕ-Հայաստան Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի ժամկետն[85] ավարտվել է 2019 թ.-ին, որը ամփոփվեց նույն թվականի մարտին Հայաստանում անցկացված «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումներով: Մինչ այժմ ՆԱՏՕ-Հայաստան Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր չի մշակված: ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի հարաբերությունները սահմանափակվել են միայն քաղաքական բնույթի հանդիպումներով և կոնֆերանսների մասնակցությամբ:

Այսպես՝ 2019 թ. մարտին Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապատուրան այցելեց Հայաստան՝ հանդիպելով ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանին, ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ալեն Սիմոնյանին, ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանին և ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանին: Նույն ամսին Հայաստանում ՆԱՏՕ-ի շաբաթվա շրջանակներում տեղի ունեցավ Կանանց, խաղաղության և անվտանգության հարցերով ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Քլեր Հաթչինսոնի այցը Հայաստան: Նա հանդիպումներ ունեցավ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Լենա Նազարյանի, ՀՀ ԱԳ նախարար Զոհրաբ Մնացականյանի և ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի հետ, ինչպես նաև ելույթով հանդես եկավ «Կանայք, Խաղաղություն և Անվտանգություն. միջազգային և Հայաստանյան պրակտիկա» խորագրով կոնֆերանսին:

2021 թ. հոկտեմբերի 21-ին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն ընդունեց Հայաստան այցելած Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինա Պիրիսին: Հանդիպման ժամանակ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը կարևորեց Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի իրականացումը՝ որպես

[85] https://www.mfa.am/hy/international-organisations/3

ՀՀ-ՆԱՏՕ համագործակցության զարգացման արդյունավետ գործիք[86]: Նույն օրը Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինա Պիրիսիին ընդունեց ՀՀ պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանը[87]:

Պետք է նշել, սակայն, որ 2020 թ. նոյեմբերից՝ պատերազմական գործողությունների դադարից հետո Հայաստանը չի մասնակցել ՆԱՏՕ-ի կազմակերպած զորավարժություններին: Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021 թ. մարտի 18-ին «Արմենպրեսի» հարցման պատասխանում հայտնեց[88], որ ՀՀ ԶՈՒ ներկայացուցիչները չեն մասնակցել «Defender Europe 21» զորավարժության պլանավորման գործընթացին և ՀՀ պաշտպանության նախարարությունը չի նախատեսում ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների մասնակցությունը նշված զորավարժությանը: Մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լրատվամիջոցին տեղեկացվեց, որ «Միջազգային զորավարժությունների կազմակերպումը և դրան մասնակցությունը երկարատև մի քանի փուլից բաղկացած պլանավորման գործընթաց է նախատեսում և դրան մասնակցել կամ չմասնակցելը մեկ օրում հնարավոր չէ որոշել, քանի որ տարբեր երկրների ստորաբաժանումների մասնակցության հետ կապված կառուցվածքային, գործառութային, թիկունքային ապահովման, տրանսպորտային և այլ հարցերը խիստ փոխկապակցված են»: 2021 թ. ապրիլի 27-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը վերստին հայտնեց, որ չի նախատեսում ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների մասնակցությունը ՆԱՏՕ-ի «Defender Europe 21» զորավարժությանը: Հիշեցնենք, որ 2021 թ. հունիսի 7-ին Գերմանիայում մեկնարկեցին Defender-Europe 21 լայնածավալ զորավարժությունները, որոնց մասնակցում էին Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ 27 երկրների ավելի քան 30 հազար

[86] https://www.lragir.am/2021/10/21/676181/
[87] https://mil.am/hy/news/10042
[88] https://armenpress.am/arm/news/1046440.html

զինծառայող[89]: Ուշագրավ է, որ այս զորավարժություններին մասնակցել են Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան[90]:

2021 թ. հուլիսին Վրաստանում անցկացված ՆԱՏՕ-ի «Agile Spirit-2021» զորավարժություններին մասնակցեցին զինվորականներ 15 պետությունների զինված ուժերի ստորաբաժանումներ (Վրաստան, Էստոնիա, Գերմանիա, Լիտվա, Լատվիա Լեհաստան, Ռումինիա, Իսպաննիա, Թուրքիա, Մեծ Բրիտանիա, Ուկրաինա, ԱՄՆ, Կանադա, Իտալիա, Ադրբեջան)[91]: Հայաստանը այս անգամ էլ չմասնակցեց ՆԱՏՕ-ի զորավարժություններին, և ինչպես նշում է «Ազատություն» ռադիակայանը՝ «Հայաստանը, սակայն, մի քանի տարի է, այդ թվում Թավշյա հեղափոխությունից հետո, Հյուսիսատլանտյան դաշինքի հովանու ներքո անցկացվող զորավարժություններին չի մասնակցում» [92]:

Նշենք նաև, որ 2021 թ. մարտի 5-ին ՀՀ շատպանության նախարարությունը հաղորդագրություն տարածեց[93] ՆԱՏՕ-ի հետ գործակցության շրջանակներում Աֆղանստանում խաղաղարար առաքելություն իրականացրած հայ խաղաղապահների վերադարձի մասին: Խաղաղապահների վերադարձը պայմանավորված էր 2020 թ. Դոհայում ԱՄՆ-ի ու «Թալիբան» արմատական խմբավորման միջև կնքված խաղաղության առաջին դաշնագիրով, որը նախատեսում էր 14 ամսվա ընթացքում Աֆղանստանից օտարերկրյա զորքերի դուրսբերում և միջաֆղանական երկխոսության սկիզբ[94]: Ներկայում հայ զինծառայողները շարունակում են իրենց առաքելությունն իրականացնել Կոսովոյում (ԿՖՈՐ)՝ Միացյալ Նահանգների և Լիբանանում (ՅՈՒՆԻՖԻԼ)՝ Իտալիայի խաղաղապահ առաքելությունների կազմում[95]: Լիբանանում ՅՈՒՆԻՖԻԼ առաքելության կազմում ընդգրկված է 33 հայ զինծառայող, ՄԱԿ-ի Մալիի բազմաչափ ինտեգրացված

[89] https://www.azatutyun.am/a/31226659.html , https://www.mil.am/hy/news/9304
[90] https://www.europeafrica.army.mil/Portals/19/documents/Fact%20Sheets/DE21%20Factsheet20210408.pdf?ver=MSNGt2ZEXgeLOxMkAtPSqQ%3d%3d
[91] https://www.europeafrica.army.mil/ArticleViewPressRelease/Article/2700304/media-advisory-exercise-agile-spirit-2021-to-take-place-in-july-and-august
[92] https://www.azatutyun.am/a/31377029.html
[93] https://mil.am/hy/news/9025
[94] https://hetq.am/hy/article/133676
[95] https://hetq.am/hy/article/133676

կայունացման առաքելության (ՄԻՆՈՒՍՄԱ)-ի կազմում՝ 1 զինծառայող: Դեռևս 2021 թ. փետրվարին ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանը հայտնել էր, որ 44-օրյա պատերազմի պատճառով ՀՀ-ն Աֆղանստանում իր խաղաղապահների թիվը կրճատել էր 52 %-ով, իսկ Կոսովոյում՝ 95 %-ով: Աֆղանստանում անձնակազմի թիվը 121-ից հասել էր 58-ի, իսկ Կոսովոյում՝ 40-ից մինչև 2-ի[96]:

Այսպիսով՝ զինված ուժերի սպառազինության և արդիականացման, և ընհանրապես զինված ուժերի բարեփոխումները ամբողջությամբ իրականացվում են միմիայն դաշնակից հանդիսացող Ռուսաստանի Դաշնության մասնակցությամբ: Հասկանալի է, որ նման մոտեցումը ակնհայտ ունի նաև քաղաքական նշանակություն և ցույց է տալիս, որ արտաքին քաղաքականության բնագավառում որոշիչ են հանդիսանում Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունները, որոնք արտահայտվում են նաև Ռուսաստանի մոնոպոլ դերով Հայաստանի անվտանգությունը երաշխավորող զինված ուժերի բարեփոխումներում:

Միևնույն ժամանակ հասկանալի չէ, թե ինչով է պայմանավորված վստահությունը, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բարեփոխումների և զարգացման և մասնավորապես՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացումը կարող է երաշխավորվել միայն Ռուսաստանի Դաշնության մասնակցությամբ:

Հաշվի առնելով, որ Ռուսաստանի Դաշնության զինված ուժերում ինչպես և ողջ պետությունում կոռուպցիան ունի համակարգային բնույթ, պաշտպանված չեն զինծառայողների իրավունքները, ձևավորված չեն զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ, ակնհայտ է, որ նման արժեքային հիմքով գործող զինված ուժերի ներկայացուցիչների մասնակցությամբ Հայաստանի զինված ուժերի բարեփոխումները ձախողված են. կամ կունենանք հենց նույն՝ Ռուսաստանի մոդելով Հայաստանի զինված ուժեր:

[96] http://www.irates.am/hy/1613994964

Ուշադրություն դարձնենք, որ այս առաջնահերթությամբ նախատեսված այս բաղադրիչով «Առավել նպատակային քաղաքականություն է իրականացվելու դաշնակից և գործընկեր պետությունների հետ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ոլորտներում», բացի «դաշնակից պետությունից», «գործընկեր պետությունների հետ» ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ուղղությամբ որևէ ջանքեր կամ գործողություններ չեն իրականացվել, որի մասին վկայում են պաշտպանական ոլորտի հայաստանյան ներկայացուցիչների հանդիպումների նկարագրությունը. հանդիպումներ տեղի են ունեցել միմիայն դաշնակից համարվող պետության՝ ՌԴ-ի ներկայացուցիչների հետ, և որևէ այլ գործընկեր պետության հետ որևէ հանդիպում, քննարկում տեղի չի ունեցել պաշտպանական բնագավառի բարեփոխումների և զարգացման նպատակով: Այսինքն՝ Կառավարության ծրագրով նախատեսված այս Առաջնահերթության նշված բաղադրիչի ուղղությամբ ոչ մի ջանք չի գործադրվել:

Այսպիսով՝ Կառավարության ծրագրով «հատուկ կարևորություն» տալով հայ-ռուսական համագործակցության ոլորտում դաշնակցային և գործընկերային հարաբերությունների զարգացմանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից զինված ուժերի բարեփոխման և զարգացման գործընթացն իրականացվում է միմիայն Ռուսաստանի Դաշնության ներգրավմամբ և մասնակցությամբ, և «գործընկեր այլ պետությունների» հնարավորություններն ու ռեսուրսները՝ Ֆրանսիա, ԱՄՆ, Իտալիա և այլն չեն օգտագործվում, մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործողությունների նոր ծրագիր մինչ այժմ մշակված չէ:

Հայտնի չէ, թե ինչպիսին են ընդհանրապես զինված ուժերի բարեփոխումների, զարգացման հայեցակարգի հիմնարար սկզբունքները, և որքանով են դրանցում արժևորվում զինծառայողների՝ զինվորական համազգեստով քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, ինչքանով են երաշխավորվում զինված ուժերում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված հաշվետվողականության և թափանցիկության, ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները:

Առաջնահերթություն 5

Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում

Կառավարության հնգամյա ծրագրի համաձայն զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործման նպատակով «կյանքի են կոչվելու տարածքային պաշտպանության համակարգի, ակտիվ պահեստազորի և աշխարհազորայինների պատրաստման ծրագրերը: Ներգրավված ուժերի և տեխնիկական նոր լուծումների միջոցով կատարելագործվելու է ՀՀ պետական սահմանի պահպանության համակարգը»:

2021 թ. օգոստոսի 24-ին ՀՀ Ազգային ժողովում Կառավարության հնգամյա ծրագիրը ներկայացնելիս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտնեց[97], որ առավել մեծ ուշադրություն պետք է դարձնել պահեստազորի պատրաստման աշխատանքներին:

Այդ համատեքստում Կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի որոշմամբ արդեն իսկ հայտարարվել էին պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երեք ամիս ժամկետով՝ 2021 թվականի օգոստոսի 25-ից մինչև նոյեմբերի 25-ը:[98]

Նշված զորահավաքի անցկացման ժամանակ՝ սեպտեմբերի 13-ին արձանագրվեց պահեստազորի զինծառայողի սպանության դեպք՝ ծառայակցի կողմից մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու հետևանքով [99]:

2021 թ. սեպտեմբերի 3-ին Կառավարության որոշմամբ հայտարարվեցին[100] պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական

[97] https://epress.am/2021/08/24/1733-6.html
[98] https://e-gov.am/gov-decrees/item/36751/
[99] https://www.azatutyun.am/a/31459155.html
[100] https://www.e-gov.am/gov-decrees/item/34698/

հավաքներ երեք ամիս ժամկետով՝ 2021 թ. սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը:

2021 թ. նոյեմբերի 17-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft) տեղադրվեց նախագիծ՝ 2021 թվականի նոյեմբերի 18-ից մինչև դեկտեմբերի 18-ը պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ հայտարարելու մասին[101]:

Նշենք, որ վարժական հավաքների կազմակերպման և անցմացման ընթացում առաջացան մի շարք խնդիրներ: Այսպես՝ պահեստազորայինների անվտանգության ապահովման խնդրից բացի ի հայտ եկան նաև այլ խնդիրներ՝ պատշաճ բուժզննության իրականացման, պահեստազորայինների տրամադրվող աշխատավարձի չափի հետ կապված, որը որոշ դեպքերում ավելի քիչ է պահեզտազորայինների զորակոչի շրջանակներում զորակոչված քաղաքացիների աշխատավարձից, ինչը հանգեցնում է ֆինանսական պարտավորությունների չկատարման: Բացի դրանից՝ հարկ է արձանագրել, որ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությունները օգոստոսի 25-ից մեկնարկող եռամսյա վարժական հավաքների մասնակցելու մասին պահեստազորայիններին սկսել են ծանուցել մինչ այդ վարժանքների վերաբերյալ Կառավարության որոշման ընդունումը եւ ուժի մեջ մտնելը[102]:

Հայտնի չէ, թե ինչ գործողություններ են իրականացվել և ինչ որոշումներ են ընդունվել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործմանն ուղղված:

Միևնույն ժամանակ պետք է եզրակացնել, որ վերը նշված վարժական հավաքները կազմակերպվում են մինչև 44-օրյա պատերազմը գոյություն ունեցող մեխանիզմներով: Իհարկե, կարևոր է պահեստազորի զինվորական պատրաստվածության ուղղությամբ նշված վարժական հավաքների կազմակեպումը, քանի որ երկար տարիներ Հայաստանում նման ժամկետով վարժական հավաքներ չեն

[101] https://www.e-draft.am/projects/3742/about
[102] https://www.azatutyun.am/a/31409420.html

կազմակերպվել, սակայն վարժական հավաքների կազմակերպման ընթացքում արդեն իսկ արձանագրված խնդիրները վկայում են, որ այս ուղղությամբ իրապես պետք է իրականացվեն զորահավաքի մեխանիզմների կատարելագործման համար անհրաժեշտ և արմատական քայլեր:

Առաջնահերթություն 6

Ռազմական կրթության որակի էական բարձրացում

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ սահմանվում է, որ «ռազմական կրթության և գիտության զարգացումը լինելու է Կառավարության գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Վերանայվելու են Հայաստանի Հանրապետության զինված ուժերում օպերատիվ, մարտական և զորահավաքային պատրաստության գործընթացները, որոնք համապատասխանեցվելու են Զինված ուժերին առաջադրված խնդիրներին և դրանց իրականացման պահանջներին: Ռազմական գործողությունների բնույթի կերպափոխման, տեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթացի, տեղեկատվական ու հոգեբանական ազդեցությունների ավելացման պայմաններում ռազմական կրթությունը լինելու է ապագայամետ՝ նախապատրաստելով հնարավոր պատերազմներին պատրաստ արհեստավարժ զինվորականներ: Կառավարությունը հետամուտ է լինելու նաև ռազմական գիտության զարգացմանը, որի շրջանակներում վերանայվելու են պատերազմավարման հիմնադրույթները, մարտական գործողությունները պլանավորելու և վարելու ձևերը»:

2021 թ. ապրիլի 8-ից 9-ը ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում անցկացվեց «Ռազմաուսումնական հաստատություններում գրավչության հիմնահարցերը» խորագրով 17-րդ գիտական կոնֆերանսը, որի ընթացքում քննարկվեցին ռազմաուսումնական հաստատությունների գրավչության

բաձրացման, բարեվարքության և որակյալ կրթության վերաբերյալ մի շարք արդիական թեմաներ[103]:

2021 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում մեկնարկեց «Պետական և ռազմական կառավարում» մասնագիտությամբ մագիստրոսական ծրագիրը, որի նպատակն է, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած տեղեկատվության, «զարգացնել ուսումնառողների ռազմավարական և քննադատական մտածողությունը, ինչպես նաև կատարելագործել նրանց ռազմագիտական ու վերլուծական կարողությունները մասնագիտական գործունեության ոլորտում»[104]:

Այնուամենայնիվ, ռազմական կրթության որակի բարձրացմանն ուղղված գործողությունների վերաբերյալ հրապարակումները սուղ են:

Միևնույն ժամանակ նշենք, որ զինված ուժերում սպայական կազմի կրթության որակի վերաբերյալ տարիներ շարունակ առկա են մտահոգություններ, որոնք հատկապես բացահայտվում էին զինծառայողների մահվան փաստերով իրականացված քննության նյութերով: Իրապես, ռազմական կրթության որակի բարձրացումը որոշիչ և էական նշանակություն ունի զինված ուժերում բարեվարքության, զինծառայողների իրավունքների պշատպանության հիմքով զինվորական կարգապահության ապահովման համար:

Առաջնահերթություն 7

Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխում

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ սահմանվում է կատարելագործել օրենսդրական դաշտը՝ տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության, տեղեկատվական

[103] https://mil.am/hy/news/9224
[104] https://mil.am/hy/news/9987

հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով:

ՀՀ Կառավարության 2021 թ. փետրվարի 11-ի «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» որոշմամբ սահմանվեց, որ «մինչև 2022 թ. կստեղծվի Ազգային կիբեռանվտանգության գերազանցության կենտրոն, որը «կհանդիսանա պետական համակարգերի կիբեռանվտանգության գրավականը, կապահովի անձնական տվյալների պաշտպանություն և կխթանի կիբեռգրագիտության զարգացումը»[105]:

2021 օգոստոսի 2-ին «Ազատության» հետ հարցազրույցում[106] ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի պաշտոնակատար Հայկ Չոբանյանը հայտնեց, որ 21-րդ դարի զինված ուժերի համակարգում առաջնակարգ դեր պիտի ունենա տեղեկատվական անվտանգությունը կամ կիբեռանվտանգությունը՝ այն բոլոր խորություններով, որը պահանջում է երկրի անվտանգությունը, ներառյալ մինչև կիբեռզորքերի ստեղծումը: Հ. Չոբանյանը նաև հայտնեց, որ իրականացվում է ռազմավարական և մարտավարական փաստաթղթերի մշակում, և հավելեց, որ առաջիկայում նաև կներկայացվի Հայաստանում կիբեռանվտանգության գործակալություն ստեղծելու առաջարկությունը:

Իհարկե, տեխնոլոգիների զարգացման այս ժամանակաշրջանում հատկապես անվտանգային և պաշտպանական ոլորտում առաջնահերթ նշանակություն ունի տեղեկատվական և կիբեռանվտանգության ոլորտի զարգացումը՝ նորագույն չափանիշներին համապատասխան, սակայն արձանագրենք, որ Ազգային կիբեռանվտանգության գերազանցության կենտրոնի ստեղծման մասին մինչ այժմ՝ 2021 թ. նոյեմբերը, չկա տեղեկություն, չնայած նման կենտրոնի ստեղծումը նախատեսված է մինչև 2022 թ.:

[105] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=149957
[106] https://www.azatutyun.am/a/31389827.html

Առաջնահերթություն 8

Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ ենթադրվում է իրականացնել ծրագրեր, որոնց նպատակն է «զարգացնել զինծառայողի և զինվորի անհրաժեշտ բարոյական հատկությունները, ամրապնդել հոգեբանական կայունությունը և ակտիվ մարտական գործողություններ վարելու պատրաստվածությունը, կատարելագործել զինվորական հոգեբանների ինստիտուտը, ինչպես նաև բարելավել բանակում տեղեկատվական, մշակութային և ժամանցային միջոցառումների բնույթը»:

Հաշվի առնելով 2020 թ. 44-օրյա պատերազմի հետևանքները, բնականաբար առաջնահերթ և հրատապ նշանակություն է ստանում պատերազմի գործողություններից տուժածների, այդ թվում՝ հաշմանդամություն և ֆիզիկական տարբեր խեղումներ ստացած զինծառայողների և նրանց հարազատների, գերությունից ազատվածների և նրանց հարազատների, գերության մեջ գտնվողների հարազատների և անհայտ կորածների հարազատների հոգեբանական աջակցության խնդիրը:

2021 թ. հունվարին Կազմակերպությունը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ խնդրելով տեղություն տրամադրել պատերազմական գործողություններին մասնակցած զինծառայողներին տրամադրված հոգեբանական աջակցմանը եւ վերականգնմանն ուղղված աշխատանքների իրականացման վերաբերյալ:

Ի պատասխան՝ ՀՀ ՊՆ-ից տեղեկացվել է, որ «պատերազմական գործողությունների սկզբից մինչև 2021 թ. փետրվարը զինծառայողների,

պահեստազորայինների և կամավորականների հետ ըստ անհրաժեշտության իրականացվում են հոգեբանական առաջին օգնության և վերականգնման աշխատանքներ։ Մասնավորեցվել է, որ անհրաժեշտ հոգեբանական աջակցություն է ցուցաբերվել շուրջ 6000 և ավել վիրավոր զինծառայողների, պահեստազորայինների, կամավորականների։ Տեղեկացվել է նաև, որ «զինծառայողներին հոգեբանական աջակցություն տրամադրվում է զորամասերում՝ սպա-հոգեբանների միջոցով, իսկ հետտրավմատիկ խանգարումների, սրացումների ու հոգեթերապևտիկ ստացիոնար բուժում ենթադրող այլ խնդիրների պարագայում զինծառայողները տեղափոխվում են համապատասխան զինվորական հոսպիտալներ, քաղաքացիական բուժհաստատություններ»։

Հարկ ենք համարում նշել, որ 2021 թ. ընթացքում Կազմակերպություն են դիմել զինծառայողներ, ովքեր մասնակցելով պատերազմական գործողություններին, ձեռք են բերել հոգեբանական խնդիրներ, սակայն գտնում ենք, որ ՀՀ ՊՆ կողմից իրենց տրամադրված հոգեբանական աջակցությունը ադյունավետ չի եղել։

Միևնույն ժամանակ տարիներ շարունակ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը անդրադարձել է զինված ուժերում հոգեբանական ծառայության զինծառայողների բարոյահոգեբանական պատրաստությանը[107]։

Անձնակազմի հետ անհատական աշխատանքներ իրականացնող սպա-հոգեբանների մասնագիտական որակավորման, որակի բարձրացման և նրանց թվաքանակի ավելացման հետ կապված խնդիրները մնում են արդիական։

Ի դեպ՝ Երեւանի մանկավարժական համալսարանում ռազմական հոգեբանության բակալավրի ծրագիրն արդեն տեւական ժամանակ չի գործում, ինչը կարող էր նպաստել ռազմական հոգեբանության զարգացմանը։

2019 թ. դեկտեմբերի 9-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը տեղեկատվության հարցմամբ դիմեց ՀՀ պաշտպանության նախարարություն՝ տեղեկատվություն ստանալու ՀՀ և ԱՀ/ԼՂ ԶՈՒ-ում ներգրավված հոգեբան-սպաների թվի, իրականացրած գործառույթների մասին։ Ի պատասխան՝ 2020 թ. հունվարի 8-ին ՀՀ ՊՆ-ը

[107] https://hcav.am/31-01-2020-hayt/

տեղեկացրեց, որ հաստիքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մերժվում է, քանի որ այդ կերպ կբացահայտվի ԶՈՒ գնդային կարգավիճակ ունեցող զորամասերի քանակը։

Այսպիսով՝ թե՛ պատերազմի հետևանքով առաջացած համակարգային խնդիրների լուծման, և թե՛ զինված ուժերում բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացված գործողությունների մասին տեղեկությունները բացակայում են, և հայտնի չէ, թե ինչ քայլեր են կատարվել այս ուղղությամբ։

Առաջնահերթություն 9

Զինվորական ծառայության գրավչության բարձրացում՝ աշխատավարձային եւ սոցիալական երաշխիքների նոր քաղաքականության միջոցով

Սույն առաջնահերթության վերաբերյալ Կառավարության հնգամյա ծրագրում նշվում է, որ «զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացումը մշտապես եղել և լինելու է Կառավարության ուշադրության կենտրոնում»: Այդ նպատակով նախատեսվում է «մեծացնել զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքները, կատարելագործել զինծառայության գրավչության և զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմները»: Կառավարության հնգամյա ծրագրի սույն կետում նաև նշվում է, որ նոր թափ են ստանալու «զինծառայողների աշխատավարձերի և այլ վճարների բարձրացումը, բնակարանային ապահովման ուղղությամբ Կառավարության հնգամյա ծրագրերը, պատերազմի հետևանքներն իրենց վրա կրող զինծառայողների սոցիալական և առողջապահական ծրագրերը»:

2021 թ. հունվարի 28-ին ՀՀ ԱԺ նախկին նախագահ Արարատ Միրզոյանը բանակի օրվա առթիվ հչեցրած իր ուղերձում ի թիվս այլ հարցերի բարձրաձայնեց զինծառայողների, հաշմանդամություն ստացած զինծառայողների եւ զոհվածների ընտանիքների սոցիալական խնդիրների մասին, որոնք, ըստ իրեն, պետության ուշադրության կենտրոնում են՝ վստահեցնելով, որ արվելու է հնարավոր ամեն ինչ դրանք լուծելու համար[108]:

Մինչ հիմնադրամի շահառու դառնալը պատերազմի հետևանքով անհայտ կորած 109 զինծառայողների ընտանիքներին տրամադրվում է ամսական 300.000 դրամ աջակցություն՝ առավելագույնը 12 ամիս ժամկետով:

[108] https://medialab.am/127184/

[109] «...https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149537 ՀՀ կառավարության 2020 թ. դեկտեմբերի 24-ի N 2180-Լ որոշում

Անհայտ կորած անձանց հարազատներին սոցիալական աջակցության տրամադրման ժամկետը երկու անգամ երկարացվել է Կառավարության որոշմամբ: Մասնավորապես, ի սկզբանե՝ 2020 թ. դեկտեմբերի 10-ի ՀՀ Կառավարության N 2001-Լ որոշմամբ անհայտ կորած զինծառայողների հարազատներին դրամական աջակցությունը տրամադրվում էր առավելագույնը 6 ամիս ժամկետով[110]:

ՀՀ Կառավարության 2021 թ. հունիսի 10-ի N 973-Լ որոշմամբ աջակցության ժամկետը երկայացվեց՝ դառնալով 9 ամիս[111]: Իսկ 2021 թ. նոյեմբերի 11 N 1832-Լ որոշմամբ նշված ժամկետը դարձավ 12 ամիս[112]:

2021 թ. մայիսի 5-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնակն կայքում (e-draft.am) հրապարակվեց[113] «*Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին»*[114] և «*Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»*[115] ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթ[116], որով նախատեսվում է զինծառայողների զինվորական կոչումների համար սահմանել հավելավճարներ, որոնց չափերը նախատեսվելու են ՀՀ Կառավարության որոշմամբ: Փաստացի, ներկայումս գործող «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի համաձայն զինծառայողներին կոչման համար հավելավճար չի տրվում, ինչը, ըստ նախագծի հիմնավորման, ազդում է զինծառայության գրավչության վրա, քանի որ օրենքով հավելավճարի իրավունք է սահմանված պետական ծառայության մի շարք այլ տեսակներում ծառայություն անցնող անձանց համար:

2021 թ. հոկտեմբերի 7-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման մասին կայքում (e-draft.am) տեղադրվեց նախագիծ[117], որով առաջարկվում է

---

[110] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=157616 ՀՀ կառավարության 2020 թ. դեկտեմբերի 24-ի 2001-Լ որոշում
[111] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153492 ՀՀ կառավարության 10 հունիսի 2021 թվականի N 973-Լ որոշում
[112] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157609 11 նոյեմբերի 2021 թվականի N 1832-Լ որոշում
[113] https://www.e-draft.am/projects/3227/justification
[114] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=156911
[115] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152457
[116] https://www.e-draft.am/projects/3227/justification
[117] https://www.e-draft.am/projects/3616/about

«մարտական դիրքերում մարտական հերթապահություն իրականացնող պայմանագրային զինծառայողների և արտերկրի ուսումնական հաստատություններում ուսումնառություն անցնող ՀՀ ԶՈՒ զինծառայողների դրամական ապահովության բարելավում»:

2021 թ. նոյեմբերի 1-ին ՀՀ ԱԱԾ տնօրենի տեղակալ Արամ Հակոբյանը ԱԺ պաշտպանության եւ անվտանգության ու Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստում հայտարարեց, որ[118] ԱԱԾ-ն նախատեսում է սահմանապահ ծառայություն իրականացնող պայմանագրային զինծառայողների աշխատավարձը բարձրացնել՝ 160 հազար դրամից հասցնելով մոտ 210-220 հազար դրամի: Ա. Հակոբյանը նաև հատնեց, որ սահմանապահ զորքերում պայմանագրային զինծառայողների աշխատավարձը բավականին ցածր է, ինչի պատճառով նրանք դիմում են ներկայացնում աշխատանքից ազատման մասին:

Տարիներ շարունակ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը[119] բարձրացրել է զինծառայողների սոցիալական ապահովության, բնակարանային ապահովման, պաշտոնական առաջխաղացման ճանապարհային քարտեզի, հանգստի կազմակերպման հետ կապված հարցերը: Հատկապես զինծառայողների բժշկական և կյանքի ապահովագրության խնդիրները մնում են չլուծված:

Այսպես՝ չնայած ՀՀ Կառավարության կողմից կատարվել են որոշ քայլեր աշխատանքներ զինծառայողների աշխատավարձային բավարարումների բարելավման ուղղությամբ, այնուամենայնիվ դրանք չեն կրում համակարգային բնույթ: Բացի դրանից՝ պարզ չեն այն մեխանիզմները, որոնցով նախատեսվում է կատարելագործել զինծառայության գրավչությունն ու զինծառայողի հեղինակության բարձրացումը:

[118] https://www.lragir.am/2021/11/01/678335/
[119] https://archive.hcav.am/events/20-11-2017-01-2/

Առաջնահերթություն 10

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կատարելագործում, զինված ուժերի կարգապահության խթանում, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանություն

Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ բացի Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կատարելագործումից, զինված ուժերի կարգապահության խթանումից և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունից նախատեսվում է նաև առավելագույն ջանքերի գործադրում ոչ կանոնադրական հարաբերությունների դեպքերը բացառելու ուղղությամբ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության կարևորության վերաբերյալ բարձրաձայնել է դեռևս 2012 թ.-ից[120]:

2016թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը Ազգային ժողովում ունեցած իր ելույթում ներկայացնելով «Ազգ-բանակ հայեցակարգը» նշեց, որ պաշտպանության նախարարության հիմնական գործառույթներից է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հսկողության հաստատումը և զինված ուժերի ու այլ պետական կառույցների միջև համագործակցության զարգացումը:

Եվ չնայած դրան՝ Հայաստանում դեռևս ձևավորված չեն զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ մեխանիզմները:

Զինված ուժերում մարդու իրավունքներին անդրադառնալով նշենք, որ 2021 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում, ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրությունների և պաշտոնական տվյալների համադրության, արձանագրվել է զինծառայողների մահվան 51 դեպք, որոնցից 12-ը՝ ավտովթարի հետևանքով (2-ը՝ վրաերթ, որը դատախանության կողմից ներառվել է ավտովթարի հետևանքով մահվան դեպքերի թվի մեջ), 10-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման, 9-ը՝ առողջական

[120] http://archive.hcav.am/wp-content/uploads/2012/04/Report.pdf

խնդիրների, 8-ը՝ ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնելու, 7-ը՝ սպանության (3-ը որակվել է որպես՝ երկու կամ ավելի անձանց սպանություն, 3-ը՝ մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում, 1-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտում), 5-ը՝ դժբախտ պատահարի հետևանքով:

Համեմատության համար նշենք, որ 2020 թ. նույն ժամանակահատվածում՝ հունվար - սեպտեմբերի ամիսներին, գրանցվել է պատերազմական գործողությունների հետ անմիջապես չկապված 58 զինծառայողի մահվան դեպք, որից 18-ը՝ առողջական խնդիրների հետևանքով, 10-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու, 10-ը ավտովթարի, 9-ը՝ դժբախտ պատահարի, 8-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման, 2-ը՝ սպանության (1-ը որակվել է՝ դիտավորյալ սպանություն, 1-ը՝ սպանություն այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով), 1-ը՝ ականի պայթյունի:

Այսպես՝ 2021 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի 37 %-ը, իսկ 2020 թ.՝ 24 %-ը սպանության և ինքնասպանության հետևանք է:

Ակնհայտ է, որ զինված ուժերում շարունակվում են ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահացության մտահոգիչ դեպքերը, որոնք հետևանք են զինված ուժերում մարդու իրավունքների և զինվորական կարգապահության պաշտպանության ոչ պատշաճ պահպանման:

Ի դեպ՝ նշենք, որ երկար տարիներ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը նաև առաջարկում էր և առաջարկում է ստեղծել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հատուկ մեխանիզմ՝ ռազմական օմբուդսմենի ինստիտուտ[121], որին անդրադարձ չկա Կառավարության ծրագրում:

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ Կառավարության հնգամյա ծրագրի սույն առաջնահերթությամբ սահմանված «զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության» վերաբերյալ դրույթը դեռևս չի իրականացվում, սահմանված չեն ժողովրդավարական վերահսկողության և

[121] http://archive.hcav.am/events/27-01-2016-0254/

քաղաքացիական հասարակության մասնակցությամբ քաղաքացիական արդյունավետ մեխանիզմներ, չի ապահովված թափանցիկություն և մասնակցայնություն հատկապես զինված ուժերում մարդու իրավունքների արդյունավետ մեխանիզմների ձևավորման հարցում:

Առաջնահերթություն 11

Ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացում

Կատավարության ծրագրի սույն առաջնահերթության նկարագրությունը ներկայացված չէ:

Անդրադառնալով այս առաջնահերթությամբ նախատեսվող «ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացման» խնդրին, հարկ է արձանագրել, որ 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո հայ-ադրբեջանական առաջացած նոր սահմանին համապատասխան ենթակառուցվածքների բացակայությունը խոչընդոտում է ոչ միայն զինծառայողների ծառայության իրականացման բնականոն ընթացքը, այլ նաև դրա պատճառով արձանագրվում են զինծառայողների, ինչպես նաև սահմանամերձ բնակավայրերի բնակիչների անվտանգությանը, կյանքին և առողջությանը սպառնացող միջադեպեր, մասնավորապես՝ հրադադարի ռեժիմի խախտում, դիվերսիոն ներթափանցում, զինծառայողների և քաղաքացիական անձանց գերեվարման դեպքեր՝ ճանապարհներին մոլորվելու հետևանքով:

Այսպես, հայ-ադրբեջանական սահմանին մարտական դիրքերի կահավորման խնդիրների մասին բարձրաձայնվում է դեռևս 2020 թ. 44-օրյա պետարազմի դադարից հետո, երբ համացանցում տարածվեցին տեղեկություններ այն մասին, որ հայկական մարտական դիրքերում զինծառայողներն ունեն ջրի, ուտելիքի խնդիր, գիշերում եմ վրաններում կամ պոլիէթիլենային տոպրակների տակ, չունեն տաք հագուստ և անվադողեր են վառում տաքանալու համար, ինչպես նաև օրվա ընթացքում կապի

միջոցները անջատած են պահում, որպեսզի լիցքավորումը պահպանվի գիշերվա համար[122]:

Որոշ քաղաքացիների նախաձեռնությամբ մարտական դիրքերին պարբերաբար տրամադրվում են վրաններ, արևային մարտկոցներ, ռացիա, վառելիք, գիշերային հեռադիտակներ [123]:

2021 թ. մարտի 15-ին ՀՀ պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը լրատվամիջոցների հետ զրույցում չհերքելով տարածված տեղեկությունները սահմանների կահավորման խնդիրների մասին՝ հայտնեց, որ «Այս պահին Պաշտպանության նախարարությունը և Գլխավոր շտաբը ամեն ինչ անում են զինվորների վիճակը, պայմանները բարելավելու ուղղությամբ, սրանք ընթացիկ աշխատանքներ են, որոնք իրականացվում են ամենօրյա ռեժիմով և գտնվում են ամբողջ հրամանատարության և Պաշտպանության նախարարության ղեկավարության անմիջական հսկողության ներքո»[124]:

2021 թ. մայիսի 3-ին ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը ԱԺ նիստում հարց ուղղեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ առաջնագծի կահավորված չլինելու մասին, ինչին ի պատասխան վարչապետը պատասխանեց, որ այդ ուղղությամբ կատարված աշխատանքների «հսկայական մեծամասնությունն» արվում է գաղտնի[125]

Հայ-ադրբեջանական սահմանային իրավիճակին անդրադառնալով նշենք, որ 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո մինչև 2021 թ. ապրիլը ՀՀ ՊՆ կողմից տարածված մամուլի հաղորդագրություններով հիմնականում տեղեկացվում էր, որ «շփման գծի ամբողջ երկայնքով սահմանային միջադեպեր չեն արձանագրվել»:

2021թ. մայիսի 12-ին ադրբեջանական զինուժը, «սահմանների ճշգրտման» հիմնավորմամբ ներխուժեց Հայաստանի Հանրապետության տարածք Սյունիքի

[122] https://hetq.am/hy/article/132736 , https://www.azatutyun.am/a/31152088.html
[123] https://medialab.am/164528/
[124] https://www.azatutyun.am/a/31152088.html
[125] https://antifake.am/am/news/11637

մարզի սահմանային հատվածներից մեկում, որի հետևանքով իրավիճակը սահմանին սրվեց, սկսվեց փոխհրաձգություն[126]:

Հաջորդ օրը՝ 2021 թ. մայիսի 13-ին, ենթակառուցվածքների խնդրին անդրադառնալով ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը «Լուրեր»-ի հետ զրույցում հայտնեց, որ 2020 թ. նոյեմբերի 9-ից հետո տեղի ունեցած մեծ փոփոխությունների, ինչպես նաև ձմռան պատճառով ամբողջ սահմանը չեն հասցրել կահավորել, հավելելով, որ դրա համար որոշակի ժամանակ կպահանջվի[127]:

2021 թ. մայիսի 21-ին «Ազատության» հետ զրույցում Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանը հայտնեց, որ այդ հատվածները ամբողջովին նոր սահմանային բնագծեր են և այնտեղ նախկինում համապատասխան կահավորում չի եղել և հավելեց, որ «նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին այնտեղ արդեն բավական հաստ ձնածածկույթ կա և բնակլիմայական պայմանները բարդ են այնտեղ աշխատելու համար»[128]: Գ. Սանոսյանը նաև հայտնեց, որ «Պատերազմից հետո սկսվել է սահմանագծման աշխատանքներ, որը շարունակական պրոցես է, եթե այնտեղ եղել են շինարարական աշխատանքներ, դրանք մնացել են, որպեսզի ձյան հալոցքից հետո արվեն, բայց տարբեր ինժեներական աշխատանքներ արվել են և այնպես չէ, որ սահմանագծում ամբողջովին բարձիթողի վիճակ էր»:

2021 թ. մայիսին սկսված լարվածությունը հայ-ադրբեջանական սահմանին պարբերաբեր կրկնվելով՝ շարունակվեց մինչև մայիսի 25-ը[129]:

2021թ մայիսի 27-ին Գեղարքունիքի մարզի սահմանային հատվածում ՀՀ զինված ուժերի զորամասերից մեկի պահպանության տարածքում ինժեներական

[126] https://mil.am/hy/news/9390
[127] https://www.civilnet.am/news/607109/%D5%B1%D5%B4%D5%BC%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B3%D5%A1%D5%BC%D5%B8%D5%BE-%D5%B9%D5%A5%D5%B6%D6%84-%D5%B0%D5%A1%D5%BD%D6%81%D6%80%D5%A5%D5%AC-%D5%A1%D5%B4%D5%A2%D5%B8%D5%B2%D5%BB-%D5%BD%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%AF%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%A5%D5%AC%E2%80%A4-%D5%A3%D6%80%D5%AB%D5%A3%D5%B8%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A8%D5%9D-%D5%BD%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB-%D5%B4%D5%AB%D5%BB%D5%A1%D5%A4%D5%A5%D5%BA%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/
[128] https://www.azatutyun.am/a/31267214.html
[129] https://mil.am/hy/news/9468

աշխատանքներ կատարելիս, ադրբեջանական զինված ուժերի զինծառայողների կողմից շրջափակման հետևանքով գերեվարվեց ՀՀ զինված ուժերի վեց զինծառայող[130]:

2021 թ. հունիսի 7-ից սահմանային լարվածությունը վերսկսվեց, երբ հայ-ադրբեջանական սահմանագծի՝ Գեղարքունիքի մարզի սահմանային հատվածում ադրբեջանական զինված ուժերը հերթական անգամ փորձեցին ինժեներական աշխատանքներ կատարել[131]:

Արդեն 2021 թ. հունիսի 12-ին լրատվամիջոցներով տեղեկատվություն տարածվեց այն մասին, որ ՀՀ պետական սահմանի արևելյան հատվածում՝ 2-րդ բանակային կորպուսի պաշտպանության գոտում, կահավորման և ինժեներական ինտենսիվ աշխատանքներ են ընթանում, խնդիր է դրված մինչև աշուն ավարտել ենթակառուցվածքների կառուցումը և լուծել զորքի կենսագործունեության ապահովման խնդիրները[132]:

2021 թ. հունիսին, ի տարբերություն մայիս ամսվա, սահմանային լարվածությունը համեմատաբար ցածր էր, բայց 2021թ. հունիսի 7-ից հետո հաջորդ սահմանային միջադեպը գրանցվեց 27-ի, երբ Ադրբեջանի կողմից կրակոցներ արձակվեցին հայկական դիրքերի ուղղությամբ[133]:

Լարվածությունը շարունակվեց և առավել սրվեց 2021 թ. հուլիսի և օգոստոս ամիսներին:

2021 թ. հուլիսի 23-ին ադրբեջանական կողմը փորձեց ԱԹՍ-ով ՀՀ օդային տարածք մուտք գործել[134]:

---

[130] https://www.azatutyun.am/a/31275983.html
[131] https://mil.am/hy/news/9510 , https://mil.am/hy/news/9528
[132] https://hy.armradio.am/2021/06/12/%D5%A4%D5%AB%D6%80%D6%84%D5%B8%D6%82%D5%B4%D5%9D-%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D6%80-%D5%AF%D6%80%D5%A1%D5%AF%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%BF%D6%80%D5%A1%D5%BD%D5%BF%E2%80%A4-%D5%BA%D5%A5%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1/
[133] https://mil.am/hy/news/9583
[134] https://www.azatutyun.am/a/31374794.html

2021 թ. հուլիսի 28-ին Ադրբեջանը մարտական գործողություններ սկսեց Հայաստանի Հանրապետության տարածքում՝ Սոթքից մինչև Վերին Շորժա հատվածում[135]:

2021 թ. օգոստոսի 9-ին՝ ադրբեջանական կողմը Շոշ-Մխիթարաշեն հատվածում, բացի հրաձգային զինատեսակներից, կիրառեց նաև ՀՀՆ-9 (հաստոցավոր հակատանկային նռնականետ)[136]: Մի քանի օր լարված փոխհրաձգությունից հետո՝ 2021 թ. օգոստոսի 16-ին, ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումները Սյունիքի մարզի Սև լճի հատվածում փորձեցին դիրքային առաջխաղացում ապահովել[137]:

2021 թ. օգոստոսին բացի թվարկված միջադեպերը, այլ միջադեպեր ևս գրանցվել են հայ-ադրբեջանական սահմանին: Մասնավորապես՝ 2021 թ. օգոստոսի 25-ին Ադրբեջանը հայտարարեց, թե նախօրեին երկու հայ զինծառայողներ դանակով վնասել են ադրբեջանցի սահմանապահին: Հայկական կողմը հերքեց լուրը: Նույն օրը երեկոյան ժամը 23:00-ի սահմաններում ադրբեջանական կողմը փակեց Կապան-Գորիս միջպետական ճանապարհի Կարմրաքար-Շուռնուխ հատվածը (Գորիս-Որոտան-Շուռնուխ՝ 21 կիլոմետրանոց հատվածը, որը, որը 44-օրյա պատերազմից հետո անցել է ադրբեջանական կողմին): 2021 թ. օգոստոսի 27-ին ճանապարհը վերաբացվեց:

Նկատենք, որ Գորիս - Կապան - Ճակատեն ճանապարհի որոշ հատվածների՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելուց հետո հայկական կողմը նախաձեռնեց այլընտրանքային ճանապարհների կառուցումը, որն ըստ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ չնախատեսված աշխատանք է և պետք է ավարտվի 2022 թ [138]:

2021 թ. սեպտեմբերին իրավիճակը կայուն է եղել. ՀՀ ՊՆ կողմից չի տարածվել տեղեկատվություն սահմանային լարվածության մասին:

---

[135] https://www.1in.am/2982959.html
[136] https://www.azatutyun.am/a/31402336.html
[137] https://mil.am/hy/news/9791
[138] https://www.azatutyun.am/a/31567820.html

2021 թ. հոկտեմբերին հայ-ադրբեջանական սահմանին կրակոցները վերսկսվեցին հոկտեմբերի 4-ին, կրկնվեցին հոկտեմբերի 9-ին, իսկ հոկտեմբերի 15-ին ադրբեջանական կողմը կրակեց ոչ միայն հայկական դիրքերի, այլ նաև քաղաքացիական բնակավայրերի ուղղությամբ[139]:

2020 թ. 44-օրյա պատերազմական գործողությունների դադարից հետո առաջին անգամ հայ-ադրբեջանական լայնածավալ ռազմական գործողություններ ծավալվեցին 2021 թ. նոյեմբերին, մասնավորապես նոյեմբերի 13-ից[140] կրակոցներով սկսված սահմանային միջադեպը շարունակվեց նոյեմբերի 14-ին[141]: Նոյեմբերի 16-ին ադրբեջանական զինված ուժերը տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից բացի սկսեցին կիրառել հրետանային միջոցներ, զրահատեխնիկա: Սահմանային լարվածությունը վերածվեց մեկօրյա լայնածավալ ռազմական գործողությունների՝ հանգեցնելով առնվազն 6 զոհի[142]: Հայկական կողմն ունեցավ նաև 2 դիրքի կորուստ[143]: Բացի դրանից՝ ըստ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ 2021 թ. նոյեմբերի 23-ին կայացած հարցազրույցի ժամանակ հայտնած տեղեկատվության՝ վերջին «չճշտված» տվյալներով՝ արձանագրվեց 32 հայ զինծառայողի գերեվարության դեպք[144]:

Հատկանշական է, որ 2021 թ. օգոստոսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում պահեստազորայինների վարժական հավաքներին մասնակցած անձինք 2021 թ. նոյեմբերին վերադառնալով այդ հավաքներից՝, դեռևս արձանագրում են «լավ պատրաստված դիրքերի» բացակայությունը, շեշտելով, որ դրանք 44-օրյա պատերազմից հետո 1 տարվա ընթացքում այստեղ ամրացման լուրջ աշխատանքներ չեն արվել, շինարարական տեխնիկա գրեթե չի աշխատել և դիրքերը «դեռևս անմխիթար վիճակում են գտնվում»[145]:

---

[139] https://mil.am/hy/news/10022
[140] https://mil.am/hy/news/10104
[141] https://mil.am/hy/news/10106 , https://mil.am/hy/news/10105
[142] https://mil.am/hy/news/10127 , https://factor.am/444656.html
[143] https://mil.am/hy/news/10116
[144] https://www.youtube.com/watch?v=8elwsXuJzVY&t=1s
[145] https://www.azatutyun.am/a/31581703.html

Բացի նշված միջադեպերից՝ 2021 թ. գրանցվել են նաև ՀՀ զինված ուժերի զինծառայողների և քաղաքացիական անձանց կողմից տեղանքում չկողմնորոշվելու և մոլորվելու պատճառով Ադրբեջանի զինծառայողների վերահսկողության տակ գտնվող տարածքներ անցնելու դեպքեր:

2021 թ. հունիսի 8-ին ՀՀ ԶՈՒ զորամասերից մեկի պայմանագրային մի զինծառայող մառախուղի պատճառով ապակողմնորոշվելով տեղանքում՝ հայտնվել է Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքում[146]: Վերջինս հունիսի 9-ի վաղ առավոտյան վերադարձվել է հայկական կողմին[147]:

2021 թ. հուլիսի 19-ին Սյունիքի մարզի Տեղ գյուղի սահմանային հատվածում համայնքի բնակիչ ապակողմնորոշվելով տեղանքում, հայտնվել է ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքում: Նույն օրը վերջինս վերադարձվել են հայկական կողմին[148]:

Պետք է նշել, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը իր հատուկ և արտահերթ զեկույցներում բազմիցս է անդրադարձել սահմանային անվտանգության ապահովման խնդիրներին, սահմանամերձ բնակավայրերի բնակիչների մարդու իրավունքների շարունակական խախտման դեպքերին, որոնք հետևանք են ռազմավարական նշանակության ենթակառուցվածքների անվտանգության ցածր մակարդակի:

Այն հանգամանքը, որ քաղաքացիական անձինք և հատկապես զինվորականները տարածքում չկողմնորոշվելու հետևանքով հայտնվում են ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքներում ինքնին վկայում է հատկապես սահմանային ռազմական ենթակառուցվածքների ոչ պատշաճ ամրապնդման մասին, որի հետևանքով վտանգվում են թե զինծառայողների, թե սահմանամերձ բնակավայրերի բնակիչների անվտանգությունը, մարտական հերթապահության,

[146] https://mil.am/hy/news/9513
[147] https://mil.am/hy/news/9518
[148] https://mil.am/hy/news/9667

սահմանային ծառայության համապատասխան ենթակառուցվածքների, մասնավորապես հստակ սահմանագծված ճանապարհների, ուղեցույց նշանների, անվտանգության տեխնիկական միջոցների, սահմանայի ծառայության իրականացման տարրական կենցաղային պայմանների բացակայության կամ անբավարար ապահովման մասին:

Այսպիսով՝ Կառավարության սույն առաջնահերթության ուղղությամբ կատարված աշխատանքների մասին հիմնականում նշվում է պաշտոնյաների կողմից՝ չմասնավորեցնելով կատարված աշխատանքների ծավալը: Ակնհայտ է, որ կատարված աշխատանքները բավարար չեն ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացման համար:

Կանանց առավել մասշտաբային ներգրավում զինված ուժերի մարտական ստորաբաժանումներում

Կառավարության հնգամյա ծրագրի՝ զինված ուժերի բարեփոխումների վերաբերյալ ենթակետի ներածական հատվածում ներկայացվում է նաև զինված ուժերի մարտական ստորաբաժանումներում կանանց առավել մասշտաբային ներգրավման գաղափարի մասին:

Նշենք, որ 2013 թ.-ից իգական սեռի քաղաքացիներին հնարավորություն է ընձեռվել ծառայել սովորել ՀՀ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում [149]: Իսկ 2020 թ.-ից աղջիկների ընդունելություն սկսեց իրականացնել նաև Մոնթե Մելքոնյան անվան ռազմամարզական վարժարանը[150]:

Դեռևս 2019 թ. զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման վարչության կազմում ձևավորվեց կին զինծառայողների հետ տարվող աշխատանքի բաժանմունք,

[149] https://www.azatutyun.am/a/25012780.html : https://www.panorama.am/am/news/2016/11/14/%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5%D6%84-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B8%D6%82%D5%AA%D5%A5%D6%80-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE/1677464

[150] https://www.lragir.am/2020/06/30/560048/

որի գործունեության նպատակն է Զինված ուժերում կանանց զինծառայության կազմակերպման և հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացումն ու վերլուծումը, բարձրացված հարցերի ու խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը[151]:

Զինված ուժերում կանանց իրավունքների պաշտպանությունը, նրանց ներգրավվածություն ու առաջխաղացման խթանումը և հավասար հնարավորությունների ապահովումն առաջնահերթություն է հանդիսանում նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության մեջ: 2020 թ. մայիսին ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում» ծրագրի ղեկավար հանձնաժողովի եզրափակիչ նիստին կարևորել է կանանց մասնակցության դրական ազդեցությունը որոշումների կայացման գործընթացում [152]:

2021 թ. օգոստոսի 24-ին Կառավարության հնգամյա ծրագիրը ՀՀ ԱԺ-ում ներկայացնելիս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ «կանանց ներգրավվածության մասին թեզը չունի որևէ գաղափախոսական կամ հակագաղափարախոսական հենք, այլ պայմանավորված է բացառապես պրագմատիկ հաշվարկով. կանայք Հայաստանի բնակչության մեծամասնությունն են, նրանց ռեսուրսի թերներգրավվածությունը որևէ ոլորտում նշանակում է մեր երկրի զարգացման պոտենցիալի աղճատում»: Ըստ վարչապետի՝ ասվածը չի նշանակում, թե կանայք զինված ուժերում պետք է նույնքան ներգրավված լինեն, որքան տղամարդիկ: Խոսքը, ըստ վարչապետի, պոտենցիալի հնարավորինս լիարժեք օգտագործման մասին է, որը դեռ պետք է բացահայտվի[153]:

2021 թ. նոյեմբերի 12-ին ՀՀ պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանն ընդունեց Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Երևանում ԵԽ

[151] https://www.azatutyun.am/a/30224898.html
[152] https://ombuds.am/am/site/ViewNews/1208
[153] https://epress.am/2021/08/24/1733-6.html

գրասենյակի կողմից իրականացվող՝ «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում» ծրագրի 2-րդ փուլի անցկացմանն առնչվող հարցեր[154]:

2021 թ. նոյեմբերի 25-ին ՀՀ ՊՆ կողմից տարածվեց տեղեկատվական հոկովակ[155] զինված ուժերում կանանց ներգրավվածության մասին, որտեղ ներկայացվում են կանանց իրավունքները զինված ուժերում:

Ներկայումս, սակայն, հայտնի չեն այն նոր մոտեցումները, որով Կառավարությունը նախատեսում է ապահովել կանանց առավել մեծ ծավալով ներգրավումը զինված ուժերում և, մասնավորապես, մարտական ստորաբաժանումներում:

Կոռուպցիոն ռիսկեր պաշտպանական կարիքների համար նախատեսված գնումների գործընթացում

2021 թ. սեպտեմբերի 28-ին ՀՀ գլխավոր դատախազության տարածած հաղորդագրության[156] համաձայն՝ 2020 թ. պատերազմական գործողությունների ժամանակ կատարված և դրան առնչվող այլ հանցագործությունների (զորահավաքային զորակոչի, զորահամալրման գործընթացներում թույլ տրված խախտումների, զորահավաքային զորակոչից խուսափելու, հրաման չկատարելու, դասալքության, պաշտոնատար անձանց կողմից պաշտոնեական դիրքի չարաշահման, պաշտոնեական անփութության, անհայտ կորած, գերության մեջ հայտնված զինծառայողների հարազատներից խարդախությամբ գումարներ հափշտակելու, զենքի ապօրինի հափշտակման կամ ռազազմամթերքը կամ ռազմական այլ գույքը փչացնելու դեպքերի) հանգամանքների առթիվ հարուցված քրեական գործերից բացի, հարուցվել են քրեական գործեր նաև ***պատերազմի և պաշտպանության կարիքների համար պատերազմից առաջ և դրա ընթացքում կատարված սպառազինության, ռազմական հանդերձանքի և պարագաների,***

[154] https://www.aravot.am/2021/11/12/1228868/
[155] https://mil.am/hy/news/10141
[156] https://www.prosecutor.am/am/mn/8289/

սնդամթերքի ձեռքբերումների նպատակայնության, արդյունավետության իրականացման ընթացքում պաշտոնատար անձանց կողմից հնարավոր առերևույթ չարաշահումների հանգամանքների առթիվ:

Անդրադառնանք 2020 թ. 44-օրյա պատերազմի դադարից հետո հրապարակված տեղեկություններին՝ պաշտպանական կարիքների ապահովման ոլորտում ապրանքների գնման ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ:

Այսպես՝ 2020 նոյեմբերի 15-ին military.arm տելեգրամյան ալիքով հրապարակվեցին փաստաթղթեր[157] ՀՀ պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի, ՀՀ պաշտպանության նախարարության զենքի մատակար հանդիսացող Դավիթ Գալստյանի և պաշտոնատար այլ անձանց ներգրավվածությամբ երրորդ երկրներով դեպի Թուրքիա զենքի վաճառքի գործարքների վերաբերյալ: Ըստ նշված փաստաթղթերի՝ ՊՆ պաշտոնյաները զբաղվել են Թուրքիային զենք վաճառելով Սիրիայում թուրքամետ ահաբեկիչների համար:

Փաստաթղթերից մեկում արձանագրված է, որ Դավիթ Գալստյանին պատկանող «Մոսթոն էնջիներինգ» ընկերությունը 10 մլն 500 հազար փամփուշ է վաճառել Թուրքիայի Պաշտպանության նախարարությանը[158]:

Ըստ ԱԱԾ կողմից տարածված տեղեկատվության[159]՝ առանձնապես խոշոր չափերով գումարներ հափշտակելու կասկածանքով Դավիթ Գալստյանը բերման է ենթարկվել և ներգրավվել է որպես մեղադրյալ Հայաստանին վատ տեսակի հրանոթի կրակոցներ մատակարարելու կազմակերպումն իրականացնելու համար:

2021 թ. փետրվարի 2-ից կալանքի տակ գտնվող Դավիթ Գալստյանը 2021 թ. մայիսի 17-ին ազատ արձակվեց՝ ՀՀ վերաքննիչ դատարանի որոշմամբ [160]:

---

[157] https://t.me/military_arm/3748?single&fbclid=IwAR009B4XO8iqqQ1x8yBcpepG-fexpA3MmYIgVdWbSRbcXbVnFmL3g-dvQa8

[158] http://www.civilnet.am/news/473559/դավիթ-գալստյանին-մեղադրանք-է-առաջադրվել-խոշոր-չափերով-յուրացման-համար-նա-անցնում-է-չորս-քրեական-գործերով/?fbclid=IwAR316i-D9mnGkZrSnJLe9tkJJ-fCJ2J5ZsTmaIzc6CLVzlHgJhjyOFfhNsk

[159] https://www.sns.am/hy/հաղորդագրություններ/2021/02/01/հաղորդագրություն-տեսանյութ/545/

[160] https://hetq.am/hy/article/130956

2021 թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ ԱԱԾ կողմից տարածվեց հաղորդագրություն[161] սպառազինության գնման գործընթացում մեկ այլ չարաշահման դեպքի վերաբերյալ. այսպես, ՀՀ ԱԱԾ կողմից տարածված հաղորդագրության համաձայն՝ 2011 թ. զենք և ռազմամթերք մատակարարող ընկերություններից մեկի կողմից Հայաստան են ներմուծվել 1985-1991 թ. արտադրության հրթիռներ: ՀՀ ԶՈՒ ավիացիայի պետ-վարչության պետը ի պաշտոնե տեղեկացված լինելով, որ ՊՆ-ում պահվող ժամկետանց հրթիռները ենթակա են եղել ետ վերադարձի, ներկայացրել է մեծ քանակությամբ հրթիռների գնման հայտ՝ գնելով այդ նույն ժամկետանց հրթիռները շուկայականից բարձր գնով:

Մատակարարումից որոշ ժամանակ անց հրթիռների մի մասը չեն կրակվել և դուրս են հանվել հաշվեկշռից, իսկ մնացածն ընդհանրապես չեն կիրառվել, այդ թվում՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված 44-օրյա պատերազմի ժամանակ:

Նյութական ծանր հետևանքների առաջացմամբ իշխանությունը չարաշահելու և պաշտոնեական կեղծիքներ կատարելու կասկածանքով Ավետիք Մուրադյանը ձերբակալվել է: Նա ներգրավվել է որպես մեղադրյալ և միջնորդություն է ներկայացվել դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ:

2021 թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ ԱԱԾ կողմից տարածվեց հաղորդագրություն այն մասին, որ վերոնշյալ քրեական գործի շրջանակներում ձերբակալվել է նաև ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալ Ս.Գ-ն [162]: Ի դեպ «անորակ հրթիռների» գործով, «Ազատություն» ռադիոկայանի հաղորդմամբ, ԱԱԾ է հրավիրվել նաև Պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը[163]:

2021 թ. սեպտեմբերի 30-ին Երևանի ընդհանուր իրավասության դատարանը բավարարեց պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանին կալանավորելու միջնորդությունը[164]:

---

[161] https://www.sns.am/hy/հաղորդագրություններ/2021/09/25/բացահայտվել-են-հհ-զինված-ուժերի-կարիքների-համար-ռազմամթերքի-մատակարարման-գործընթացում-հհ-զինված-ուժ/639/
[162] https://www.sns.am/hy/հաղորդագրություններ/2021/10/02/հաղորդագրություն/641/
[163] https://www.azatutyun.am/a/31484439.html
[164] https://armtimes.com/hy/article/222045

2021 թ. հոկտենբերի վերջին Դավիթ Տոնոյանի փաստաբանը հայտնեց, որ ՀՀ Վերաքննիչ դատարանում Դավիթ Տոնոյանի բողոքը՝ վերջինիս ազատ արձակելու պահանջի մասին չի բավարարվել, հավելելով, որ որևէ քննչական գործողություն չի իրականացվել[165]:

Նշված քրեական գործերի քննությունը շարունակվում է, հայտնի չէ թե ինչ ընթացք կստանան դրանք, սակայն ակնհայտ է, որ տարիներ շարունակ զինված ուժերում տարածված կոռուպցիոն ռիսկերը դեռևս չեն հաղթահարվել, չեն ստեղծվել հատկապես պաշտպանության բնագավառի պետական գնումների նկատմամբ պատշաճ վերահսկողության, շահերի բախումը կանխող մեխանիզմներ: Ի դեպ Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հետազոտության համաձայն «Հայաստանի պաշտպանության ոլորտի օրինավորության համաթիվը (հրապարակվել է 2020թ. դեկտեմբերի 9-ին)՝ միջինացված գնահատվել է 43՝ դասվելով D խմբի երկրների շարքին, որում կոռուպցիոն ռիսկերը բարձր են և կոռուպցիայի նկատմամբ հաստատությունների դիմադրողականությունը՝ ցածր»[166]:

[165] https://medialab.am/194706/?fbclid=IwAR0WEFdl-RNWxedl6sT5EMuQ6SIElYn9Exc6gSpaJRlHrxnUxBeAJD8R_aw
[166] /https://transparency.am/hy/news/view/3388/

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով ՀՀ Կառավարության 2021 - 2016 թթ. հնգամյա ծրագրի՝ զինված ուժերի բարեփոխումների և զարգացման վերաբերյալ Առաջանահերթություններով նախատեսված գործողությունների կատարման վերաբերյալ հասանելի տեղեկությունները, կարող ենք արձանագրել.

- Հայտնի չէ, զինված ուժերի բարեփոխումների, զարգացման հայեցակարգը և նրա հիմնարար սկզբունքները, մասնավորապես՝ որքանով են դրանցում արժևորվում զինծառայողների՝ զինվորական համազգեստով քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, ինչքանով են երաշխավորվում զինված ուժերում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված հաշվետվողականության և թափանցիկության, ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմները:
- Զինված ուժերի բարեփոխումներ և զարգացման համար առանցքային նշանակություն ունի հնարավոր ռիսկերի կանխատեսումը, գնահատումը և կառավարումը, որի իրականացման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների, մեխանիզմների առկայության մասին որևէ տեղեկություն հայտնի չէ հասարակությանը:
- Զինվորական ծառայության ժամկետների փոփոխության վերաբերյալ վերջնական որոշում դեռևս չի կայացվել, միաժամանակ հստակ չեն պրոֆեսիոնալ բանակի անցնելու վերաբերյալ մոտեցումները, և շարունակում է գործել մինչ այժ կիրառվող «խառը կոմպլեկտավորման սկզբունքը»:
- Ազգային անվտանգության նոր ռազմավարության և ռազմական նոր դոկտրինի մշակման աշխատանքները դեռևս սկսված չեն, և հայտնի չեն դրանց ուղղությամբ որոշումները:
- Մինչ այժմ չեն ներկայացվել պաշտպանության ոլորտի համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների նպատակով առաջարկություններ:

- Հայտնի չէ, թե ինչ գործողություններ են իրականացվել կամ իրականացվում պետության ռազմական անվտանգության համակարգի մարմինների պաշտպանության ոլորտին առնչվող լիազորությունների ու պարտականությունների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև միասնական ավտոմատացված կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ:
- Հայտնի չէ զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման ուղղությամբ գործողությունների մասին, մինչդեռ իրականացվում են կադրային լայնածավալ և շարունակական փոփոխություններ, որոնք պայմանավորված չեն զինված ուժերում բարեփոխումների և զարգացման խնդիրների, մասնավորապես զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավման հետ:
- Հետևողական և սկզբունքային մոտեցում չի դրսևորվում զինված ուժերի քաղաքական զսպվածության սահմանադրական սկզբունքի իրականացման ուղղությամբ:
- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բարեփոխման և զարգացման գործընթացն իրականացվում է միմիայն Ռուսաստանի Դաշնության ներգրավմամբ և մասնակցությամբ, և «գործընկեր այլ պետությունների» հնարավորություններն ու ռեսուրսները չեն օգտագործվում:
- Շարունակվում են գործել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մինչպատերազմյան մեխանիզմները, և հասարակությունը տեղյակ չէ դրանց կատարելագործման ուղղությամբ իրականացվող քայլերի, նախագծերի, մոտեցումների մասին:
- Ռազմական կրթության որակի էական բարձրացման ուղղությամբ գործողությունների մասին որևէ տեղեկություն հայտնի չէ հանրությանը:
- Պաշտպանական ոլորտում նորագույն չափանիշներին համապատասխան տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության զարգացման նպատակով Ազգային կիբեռանվտանգության գերազանցության կենտրոնի

ստեղծման մասին մինչ այժմ՝ 2021 թ. նոյեմբերը, չկա տեղեկություն՝ չնայած այդ կենտրոնի ստեղծումը նախատեսված է մինչև 2022 թ.:

- Թե՛ պատերազմի հետևանքով առաջացած համակարգային խնդիրների լուծման, և թե՛ զինված ուժերում բարեյահոգաբանական պատրաստության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացված գործողությունների մասին հասանելի տեղեկություններ բացակայում են, և հայտնի չէ, թե ինչ քայլեր են կատարվել այս ուղղությամբ, մինչդեռ զինված ուժերում մահացության դեպքերը վկայում են զինված ուժերում բարոյահոգեբանական մթնոլորտի և վիճակի բարելավման ուղղությամբ անբավարար ջանքերի մասին:
- Չնայած ՀՀ Կառավարության կողմից ներկայումս կատարվում են որոշակի աշխատանքներ զինծառայողների աշխատավարձային բավարարումների բարելավման ուղղությամբ, այնուամենայնիվ դրանք չեն կրում համակարգային բնույթ: Բացի դրանից՝ պարզ չեն այն մեխանիզմները, որոնցով նախատեսվում է կատարելագործել զինծառայության գրավչությունն ու զինծառայողի հեղինակության բարձրացումը:
- Զինված ուժերում շարունակվող ոչ մարտական պայմաններում զինծառայողների մահացության մտահոգիչ դեպքերը վկայում են զինված ուժերում մարդու իրավունքների և զինվորական կարգապահության պաշտպանության ոլորտում անմխիթար վիճակի մասին, և հայտնի չէ դրանց ուղղությամբ ինչ քայլեր են ձեռնարկվում:
- Մինչ այժմ սահմանված չեն զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ ապահովված չի թափանցիկություն և մասնակցայնություն հատկապես զինված ուժերում մարդու իրավունքների արդյունավետ մեխանիզմերի ձևավորման հարցում:
- Բավարար ջանքեր չեն գործադրվում ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների, հատկապես՝ սահմանային

ծառայության, սահմանային անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ:

- Հայտնի չեն այն նոր մոտեցումները, որով Կառավարությունը նախատեսում է ապահովել կանանց առավել մեծ ծավալով ներգրավումը մարտական ստորաբաժանումներում եւ զինված ուժերի այնպիսի պաշտոններում, որպեսզի առավել շատ ապահովվի նրանց մասնակցությունը որոշումների կայացմանը:
- Տարիներ շարունակ զինված ուժերում տարածված կոռուպցիոն ռիսկերը դեռևս չեն հաղթահարվել, չեն ստեղծվել պաշտպանության բնագավառի պետական գնումների նկատմամբ պատշաճ վերահսկողության, շահերի բախումը կանխող մեխանիզմներ:

Այսպիսով՝ զինված ուժերի բարեփոխումների և զարգացման ուղղությամբ իրականացվող գործողությունների մասին հանրությունը պատշաճ տեղեկացված չէ՝ չնայած այս բարեփոխումներն անմիջապես ու կենսականորեն կապված են հենց քաղաքացիների անվտանգության, նրանց իրավունքների պաշտպանության ապահովման հետ, իսկ իրականացվող ջանքերի արդյունքները դեռևս տեսանելի չեն: